



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19692

Quercus

Quercus agrifolia
19692

874
0.1
24

19692



Մասն 1/57
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

47

Ա.Ղ.Ջ.ԿԱՆՑ

370.1

Ռ-24



ԹԱՐԳՄԱՆՆՑ Ի ԳԵՐՄԱՆՆԵՐԻՆԷ

Ս. ՄԱՆԵՒԷԼ ԱՆԱՆԵԱՆ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՑ ԳԱՎԱՅԵԱՆ

1872

2010

12001

411298-ակ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այսօր բոլոր աշխարհ դաստիարակութիւն կը դռնէ ու դաստիարակութիւն կը լսէ. եւ այս մեծ իրաւամբ կընէ, վասն զի՝ մարդկանց եւ ազգերու միակ նպատակը երջանկութիւնն ըլլալով, դաստիարակութիւնն է միայն, որ դանոնք ճշմարտապէս կ'երջանկացնէ: Երջանկանալու համար ասկէ դատ ուրիշ ոչ մի ուղիղ ճանապարհ չկայ: Բայց ցաւալին այն է, որ ըստ մեծի մասին, չհասկանալով է, որ կը դռնէն զայն, որպէս է եւ մեր թշուառ Ազգը: Սա լսելով որ ամէն կողմէն դաստիարակութիւն կը կանչեն, ինքնալ կըսկսի կանչել՝ առանց իմանալու եւ ուսանելու թէ ինչ է այն: Եւ այս իսկ պատճառաւ է որ դաստիարակութիւնը մեր մէջ դեռ մտած չէ, կամ ըստ ամենայնի սխալ եւ ուրիշ կերպարանքով մտած է, զոր կարելի չէ դաստիարակութիւն անուանել: Այսպէս՝ դաստիարակութիւն չհասկանալէն է, որ մեր մէջ անոր համար դեռ մեծ զտնդութիւններ չեն ըլլար, զայն չհասկանալէն է, որ կը կարծեն թէ մեր վարժարաններուն մէջ դաստիարակութիւն կարելի է, զայն չհասկանալէն է, որ ուսումն դաստիարակութիւն կ'անուանեն, զայն չհասկանալէն է, մէկ խօսքով, որ մեր Ազգը դեռ կը հեծէ: Թէպէտ կան մեր այր մարդկանց մէջ անհատներ, որք զայն կը հասկնան, բայց չէ որ հիմնաւոր դաստիարակութիւնը միայն ու միայն մարց, այսինքն, կանանց գործըն է:

Սակայն ինչպէս պիտի կարենան մեր մայրերը ուսանիլ եւ ուսուցանել զայն: Ինքնին բան մտածելէ, նկատելէ, յօրինելէ եւ գտնալէ չատ հեռի են նոքա: Եւրոպա կամ Ամերիկա ալ յաճախելու սովորութիւն

Երկրորդ եւ արեւի տարրութեանց իրատուերը
Թարգմանիչն իրեն Պերայրսիւս է



(11688-57)

29775-60

չունին, որ կամայ ակամայ ուսանին դայն: Ըստ իս մէկ միջոց միայն կը մնայ դանոնք այս բանին հասցընելու, այն է դաստիարակութեան վերաբերեալ ընտիր թարգմանութիւններով գէթ Եւրոպա մտեցնել անոնց: Եւ այս իսկ պատճառաւ ես ձեռք զարկի այս փոքրիկ թարգմանութեանը՝ ծագին մատին օգնել կամենալով դաստիարակութեան մեծ գործին:

Թարգմանութեանս հեղինակութեանը գալով կըրնամ զայն ամենայն վստահութեամբ առաջարկել մերազնէից: Վասն զի սա Գերմանական, այս դիտութեան եւ դաստիարակութեան աշխարհի երեւելի հանճարներէն մին, Կարոլոս Ծօն Ռաումէրի գործն է: Այնչափ պարզ, գործնական, գործադրելի եւ օգտակար աշխատութիւն մը, որ խորհուրդ կուտամ բառ առ բառ բերան սորվել, ան ալ ոչ միայն մայրերուն, այլ եւ բոլոր անոնց, որոնք միանգամ առիթ կուեննան արդայոց հետ տեսնուիլ: Դաստիարակութիւնը որչափ որ փափուկ ու դժուարին գործ է, այնչափ ալ գործոյս ամենապարզ ներկայացումն հեղինակին հանճարն ու հմտութիւնը ցոյց կուտայ: Գրուածքի պարզութիւնը այն աստիճան է, որ կարգալէն յետոյ մարդու մտքէն կանցնի թէ այսպէս բան մը ամէն ոք կրնար գրել: Բայց այնպէս չէ, պարզ գրելէն ալ աւելի դժուարին գրուածք չըլլար, վասն զի, ինչպէս ըսինք, ասոր համար հանճար ու հմտութիւն պէտք է: Սակայն որչափ ալ որ պարզ է սոյն գործը, բայց եւ այնպէս պէտք է ծանր, մտածելով եւ ուշադրութեամբ կարդալ, վաստն զի գիտութիւն է սա եւ ուսումնասիրել կը պահանջէ: Սորա ոչ միայն տողերը, այլ եւ տողերու մէջերը կարդալու է, այսինքն, հասկնալու է նաեւ նոցա ներքին միտքը, հետեւութիւնները, եւ նոյն կանոններուն վրայ լուծուող միւս խնդիրները:

Գրքոյս՝ չնայելով որ «Դաստիարակութիւն Աղջը-

կանց» անունը կը կրէ, բայց թէ աղջկանց եւ մանչերու մանկութիւնը գրեթէ նոյնն ըլլալով, եւ թէ այր ու կին մարդկանցմէ գրեթէ նոյն առաքինութիւնները պահանջուելով երկու սեռերուն ալ կարելի է վերաբերել սորա բովանդակած վարդապետութիւնքն, ինչպէս արդէն հեղինակն ալ կընէ բացի ինչ ինչ տեղեր:

Ահա, Հայեր, դաստիարակութեան գեղեցիկ պարտիզակ մը, որի համար դուք այնքան կը բացազանչէք, եւ որմէ դուք դեռ այնքան հեռի էք:

ԹԱՐԳՄԱՆԻԶՆ



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂԶԿԱՆՑ

Ժողովուրդներու լաւ կառավարութեան և ճշմարիտ երջանկութեան հիմը անական լաւ կառավարութեան մէջն է : Տնական կառավարութիւնն է , որմէ միւս բոլոր կառավարութիւնքն և իշխանութիւնքն իրենց սկիզբն առին : Եթէ այս արմատն լաւ չեղաւ , անկէ ոչ բուն և ոչ բարի ստուղ կը յառաջանայ : Թագաւորութիւններն առանձին առանձին տուներէն կը բաղկանան : Աւր որ հայրն ու մայրը վատ կը կառավարեն , և տղայքն ստահակութեան մէջ կը թողուն , այնտեղ ոչ քաղաք , ոչ գիւղ , ոչ նախարարութիւն , ոչ թագաւորութիւն և ոչ կայսրութիւն խաղաղ ու երջանիկ կը կառավարուին : Վասն զի տղայէն կըլլայ ասն հայր , դատաւոր , քաղաքապետ , իշխան , թագաւոր , կայսր , քարոզիչ , վարժապետ և այլն . եթէ նա վատ դատ տիրակաւած է , հպատակներն ալ տիրոջը պէս կըլլան , անդամներն ալ ինչպէս որ գլուխը . . . :

Եթէ տան հայրն այնքան ցած է , որ հայրենեաց համար երբէք չի մտածեր , և գոհ է երբ միայն իւր արուեստին և իւր պաշտօնին մէջ անվրդով իւր՝ հանապազօրեայ կեանքը կը վարէ , և երբ իւր ողորմելի զբաղմունքն անխռով կըլլայ , — եթէ այս է ասն հօր մտածմունքն , ի՞նչ պէս հօր օրինակն տղայոց մէջ որ և է հայրենասիրութեան ընծիւղը չի չորցուներ , և ընդհակառակն ամենացած ետականութեան որ և է ընծիւղը չի զարգացներ :

Եւ ի՞նչպէս հնարաւոր է աղջկանց դատարարակութիւնը այն ընտանեացը մէջ, ուր ծնողքն ցած և ծուռ մտածմունք ունենալով՝ իրենց աղջկանց դատարարակութեանը վերաբերմամբ ալ անպատճառ մի ծուռ ու ցած նպատակի հետեւելու են: Այս նպատակն ուրիշ բան չէ, եթէ ոչ աղջիկներն այնպէս դատարարակել, որ շուտով ամուսնանալ կարենան, բաւական է որ այրն լաւ և ապահով եկամուտ ունենայ:

Այսպէս՝ միայն արտաքին յատկութեանց ու փայլունութեանց նայելով ամուսնացողներէն քանինե՛ր ամենայուսահատ կերպիւ կը մեռնին, առանց ամուսնական ամենաքաղցր կենացմէ ձաշակ մը առնելու: Բայց ի՞նչ, ցած ծնողաց նըպատակն, ինչպէս ըսինք, լրումն առաւ, երբ իրենց աղջիկը այր մը ունեցաւ — կուղէ թող նա նորա հետ առանց սիրոյ և ամենացուրտ ձանձրութեան մէջ իր կեանքն քաշքշէ . . . :

Ինչպէս որ ժողովուրդներու երջանկութեան հիմն բարի ընտանիքներն են, նոյնպէս և ընտանեաց երջանկութեան հիմն գլխաւորապէս բարի կնիկներն են: Նորա տէրութեան և եկեղեցւոյ վրայ եթէ ուղղակի ազդեցութիւն չունենան ալ, գէթ այն նշանաւոր անուղղակի ազդեցութիւնն ունին՝ ներգործելով իրենց ոչ միայն աղջկանց այլ և տղայոց դատարարակութեանը վրայ . . . :

(Ուրեմն՝ սրչափ որ մեծ ուշադրութիւն դարձնենք մեր աղջկանց դատարարակութեանը վրայ՝ արժէ):



ԿՐՕՆԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ՍԿԶԲԵՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Աստուածապաշտութեան սերմունք ցանելու սրբազան սրարտականութիւնը ծնողաց վրայ է: Մայրն աղօթելու է երախային համար և կարելի եղածին չափ կանուխ սորվեցնելու է, որ նա ինքնին աղօթէ, որպէսզի սա երկրորդ բնաւորութիւն դառնայ անոր: Երախայն խօսիլ սկսելուն պէս՝ մայրն անոր կարճիկ ու յարմար ու տանաւոր աղօթէք մը սորվեցնելու է, որն որ նա բազկատարած ձեռնիկներով մօր հետ վանկ առ վանկ կրկնելու է: Յետոյ պէտք է ընտելացնել որ նա առանց օգնութեան կարենայ այն աղօթքն ընել:

Մայրը Յիսուս մանկան վրայօք և Աստուածաշունչէն փոքրիկ պատմութիւններ ընելու է անոր: Երեք տարուց յետոյ կարելի կը լինի նաեւ փոքր առ փոքր քրիստոնէութեան պարզ վարդապետութիւններն ալ աւանդել: Ընդ այս լաւ կը լինի եթէ երախայն նաեւ Աստուածաշունչի կարճիկ առածներ ու կրօնական ոտանաւորներն ալ բերան ընէ: Այսպիսով կոխին երախայք ցորեկ յաճախ մօր քովը գալ և իրենց առածներն ու ոտանաւորներն կրկնել տալ. թող զայս՝ սորվածները յիշեցնելու և կարճ ու յարմար օգտակար դարձուածները ընելու ալ ուրիշ շատ յարմար առիթներ կը պատահին, սակայն զգու-

Հանալու է որ չըլլայ թէ նորա երկար քարոզներ դառնան : Լաւ պատկերազարդ Աստուածաշունչ մը մօր պատմածները կը կենդանացնէ , մեծ քոյրերեղբարցն ալ ոչ սակաւ ուրախութիւն կ'առթէ՝ փոքրերուն հետը այսպիսի պատկերներ տեսնել , և նոցա բովանդակութիւնը պատմել անոնց :

Արչափ կարճ ու պարզ լինի աղօթքը , զոր մայրն ամէն օր առաւօտ և երեկոյ երախային իւր անկողնի մէջ աղօթել կուտայ՝ այնչափ շուտով ինքզինքն ստիպուած կզգայ երախայն իւր առանձին վայրկեանները անով անցունել : Նա երեկոյներ գոհանայ պիտի Աստուծոյ այն ամէն բարեացը համար , զորս Նա նոյն օրը պարգեւեց անոր . ճնողաց ու քոյրեղբարց համար ալ աղօթելու է . և՛ եթէ օրուան մէջ անհնազանդ գտնուած է , սրտով աղաչէ պիտի Աստուծոյ որ թողու անոր :

Արչափ ալ որ աննկատելի են տղայոց այս բրիտանէական սկզբնաւորութիւնքն , բայց և այնպէս ապագայ բրիտանէական կեանքի կենդանի սերմեր կը պարունակեն իրենց մէջ — սերմունք ներքին սիրոյ և աներկբայ հաւատարմութեան առ Աստուած , սերմունք խոնարհական զղման և որտազին շնորհակարութեան առ այն , որ մեռաւ մեզ խաղաղութիւն բերելու , և վերջապէս սերմունք սիրոյ առ ամենայն մարդիկ : Այսպիսով երախայոց էրկրորդ բնաւորութիւն կը լինի քրիստոնէութիւն , և հետեւաբար այնպէս հաստատ արմատացած , որ ապագայում ամէն հողմէ արմատախիլ չի լինիր :

Թէ միայն քրիստոնէայ ընտանեաց մէջ բրիտանէական դաստիարակութիւն կարելի է , ինքն բառ ինքեան հասկանալի է : Բայց և բրիտանէայ ճնողքն իրենց կենցաղավարութիւնն ու սորվեցուցածները (այսինքն , գործն ու խօսքն) ներդաշնակելու համար հոգ տանելու են , ապա թէ ոչ՝ տղայք կասկածելի կերպով կը շփոթուին ու կ'երկբային : — Ճմարիտ բրիտանէայքն անգամ դիւրու զանազան անտեղութեանց մէջ կ'ընան , մանաւանդ այնպիսիք , որք սխալ ջերմեռանդութեան մը կը հակին : Այն տեսակ անտեղութիւններէն են , զորօրինակ , խիտտ յաճախ ու խիտտ ճապաղ խրատներ առ երախայս , խիտտ երկար սերտողութիւնք , ճնշումն ջերմեռանդ զգացմանց ցոյցերուն վերայ , միշտ կըրկնուող , ձանձրացուցիչ բարեպաշտական խօսքեր և այլն : Թերեւս երախայքն շատ կանուխ եկեղեցի տանելն ալ այն տեսակներէն համարուի : Սովորական քարոզները փոքրերուն համար չափէ դուրս երկար ու անհասկանալի են , ոյր վասն և արդէն որոշ , կարճ , երախայոց ըմբռնողութեան յարմար ժամերգութիւն մը պահանջուած է փոքրերուն համար : Սակայն քանի՞ դիւրութեամբ կրնայ այսպիսի ժամերգութիւն մը չափազանց քաղցր , զարդարուն և անպէտ կրօնամոլական դարձուածքներու մէջ մոլորուիլ : Կրօնագիտութեան դասերու մէջն ալ յաճախ այսպիսի անտեղութիւնք յառաջ կուգան , նորա իրենց երկարութեամբն , և մանաւանդ չափազանց վերացական վարդապետութեամբն աշա-

կերաները կհոգնեցնեն : Պէտք չէ՛ նաև որ վարժապետները աղջիկներուն կրօնական առարկաներու վրայօք այնպիսի դրաւոր շարադրութեանց բնաբաններ տան , որոնք նոցա բմբբումանէն շատ վեր են : Այնպիսի ժամանակ մը , ուր այսպէս անուանեալ քրիստոնէական խղճահարութիւնը շատ մը հոգեւորականաց համար ամէն բան ըսել է , խեղճ աղջիկները փորձութեան կհանգիւսին : Նոքա պէտք էին քրիստոնէական պարզութեան և աներկբայելի , խորունկ արմատացած , առողջ հաւատոյ մէջ զարգանալ , և բոլոր կեանք այնպիսի մանուկներ մնալ , որ պէս Քրիստոսը երկնից արքայութեան համար կը պահանջէ ըլլալ : Վարդապետական մեկնութիւնք , որոնցմէ շատերուն նոցա իսելք հասնիլ կարող չէ , կխառնակեն զանոնք , հաւատոյ մէջնալ կմոլորցնեն :

Երբ այսպիսի դասառութեամբ միտքը կը լծուի ու չափազանց ալ կը բեռնաւորուի , հակառակ ծայրն ինչալու մեծագոյն կասկածանաց տեղի կուտայ : Այն հակառակ ծայրն ըսել կուզեմ , ուր կրօնագիտութեան կեղծ ուսուցիչները կը ձգեն . երբ նոքա իրենց աշակերտուհեաց՝ փոխանակ պարզ և լուրջ կերպիւ փրկութեան ճանապարհը ցոյց տալու , ամէն ջանքը՝ ի գործ կը դնեն զանոնք վայրկեան մը ոգեւորելու : Վայրկեան մը կըսեմ , վասն զի չափազանց ոգեւորման խիստ յաճախ ամենարագ անհոգ անտարբերութիւն կը հետեւի : Եւ ոչ սակաւ անգամ ուսուցիչը , այն ուրախութեամբ : Թէ իւ

րեն յաջողուած է ոգեւորել , կը յաւելու ոգեւորողին նաև մի գովեստ՝ Թէ նա շատ զգայուն ու մաքուր սիրտ ունի և այլն : Ոգեւորութիւնը կ'անհետանայ , սակայն վատ սնապարծութիւնը՝ ոչ , զոր ողջամելին նոյն գովեստի ազդեցութեամբը կրօնի դասէն կ'ստանայ :

2. ՄԱՀՈՒԱՆ ԵՐԿԻՒՂ

Քրիստոնէական կանուխ դաստիարակութեան բարիք մըն է , որ մահուան երկիւղը երախայոց սրտերու մէջ տեղի չի կրնար ունենալ : Բայց տխմար ճնողքն այս բարեաց խոջընդոտն կը լինին , երբ տղայոց ներկայութեանը մահուան վերայօք իբր սոսկալի բանի մը վրայօք կը խօսին , որմէ իբր Թէ իւրաքանչիւրը վախնալ պէտք է . և մինչև անգամ դիպող առթիւն կըսեն . «չը լինի Թէ այս բանը ընես՝ ապա Թէ ոչ կը մեռնիս» :

Եթէ ըսեն տղայոց , նաև երբ ամենասիրելիքը կը մեռնին , Թէ նոքա այսուհետև սիրելի Աստուծոյ քովն են , նոքա երանելի են , և եթէ օր առաջ սորվեցնեն նոցա Ս. Գրքի այս բանին վերաբերեալ առածներն և մեր եկեղեցական գեղեցիկ ու մխիթարական տողերէն պատշաճ եալներն , այն ատեն նոքա ամէն արտասուք , զոր Թափել կը տեսնեն , միայն սիրելի երանելւոյն ցաւալի կորստեան կը վերաբերեն : Եթէ փախուկ զգացման տէր տղաներ են՝ հետեւնին կուրան ալ : Չիլան ալ նէ , պէտք չէ սրտի պնդութեան նշան համարել զայն , և մանաւանդ կարծուած անտարբերութեանը համար սպառնալ

անոր, վասն զի այսպիսով ճնողքն իրենց տղաներ կրնան լալիան դարձունել:

Այն երախայքն, որոց կանխաւ Ս. Գրքէն սորվեցուցած են, թէ մարդը մեռնելով երկինք Փրկչին քովը կերթայ, մխիթարիչ և հաստատուն հաւատով մը իրենց վշտացեալ ճնողաց ամենասիրելի մխիթարիչներ կըլլան, երբ նոցա սիրելիքը մեռնելու լինին:

3. ՆԱԽԱՆՁՈՒ ԵՒ ՇԱՀԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՁԱՐԹՆՈՒԼԸ
ՏՂԱՅՈՑ ՄԵՋ

Ինչպէս որ բնական (ֆիզիզական) ձեռնարկութիւնը մանկական տիոց մէջ մարմնոց համար կարեւոր՝ ու ամբողջ ապագայ առողջութեան հիմնադիր է, նոյնպէս ալ բարոյական ձեռնարկութիւնը հոգւոյ համար է: Երախայի վրայ իւր բոլոր կեանքի համար անջնջելի ազդեցութիւններ կըլլան, յառաջ բան թէ մենք շատ անգամ կը մտածենք, թէ բան մը անոր վրայ կրնայ ազդեցութիւն ընել: Եթէ հոգւոյ արատները, կրտսէ Ժան Պատու, զորս սխալ վարմունքներով առջի տարիներ կը պատճառեն տղայոց, խեղանդամներու և մարմնոց ուրիշ վէրքերու պէս տեսանելի լինէին, որպիսի տգեղ կերպարանք պիտի ներկայացնէր մեր մատաղ սերունդը: — Ես կուղեմ նոյն սխալ վարմունքներէն բանի մը օրինակներ տալ:

Այսպէս շատ անգամ ամենափոքրիկ երախաներուն կերակուր տալու ժամանակ կըսուի կէր, թէ չէ կուտամ քրոջդ, կամ նաև, սպա-

սիր, եթէ դու իսկոյն չուտես, ես կուտամ: Երախան երբ մի խաղալիք կամ զգեստ ստանայ՝ կրտսէն անոր, սա՛ բոլորովին քուկդ է, եղբայրդ ասոր մէջ մաս չունի. տես, միւս տղաներ այսպէս գեղեցիկ բան մը չունին, այլ դու միայն: Այսպիսով ատելութիւն և շահասիրութիւն կը սերմանուին երախաներուն մէջ և կը մշակուին, յառաջ բան թէ նոքա տալու և մասնակից ընելու քաղցրութիւնը զգացած են, ո՛չ թէ այսպիսի սխալ վարմունքներ պէտք է որ յառաջ դան, այլ ընդհակառակն պէտք է որ մանկիկը կերակրած ժամանակ ուրիշ բանիներ ալ հետն առնուլ, և մերթ օրէ մերթ նոցա ալ սրտատա մը տալ. նոքա իրենց ուրախութիւնը յայանելու չեն դանդաղիր: Եթէ այնտեղ ուրիշ տղայ չի գանուիր, թո՛ղ կերակրողն ինքն երբեմն պատառ մը առնելով գովէ երախայէն ստացած կերակուրը. այսպիսով նա կանխաւ կը սորվի նաև ուրիշի վրայ մտածել, և ո՛չ միայն իր վրայ: Եթէ երախայն ծաղիկներ կամ որ և իցէ խաղալիք մը ստանայ, զոր բաժին բաժին ընելով անպէտ չի լինիր, թո՛ղ հէնց սկիզբէն ընտելացնեն անոր՝ այլոց անկէ բաժին հանել: Իսկ եթէ չբաժնուիր, այն ժամանակ թո՛ղ դրդէն երախայն, որ նա զայն փոփոխակի նաև ուրիշ երախայի մը խաղալու տայ: Գրեթէ ամէն այսպէս վարժուած երախայն յետոյ ինքն իսկ պիտի ցանկայ միւս երախաներուն բաժին հանել⁽¹⁾:

(1) Շատ այսպիսի բաներ մեր ճնողք ճնչին համարելով՝ վրանին ո՛չ միայն ուշադրութիւն չեն դարձը-

Չնայելով որ շատ վտանգաւոր է երախանե-
րուն մէջ որ և է կերպիւ նախանձ յարուցանել,
բայց և այնպէս այս բանը խիստ յաճախ կը պա-
տահի: Ես տեսած եմ ո՛չ միայն անհասկացող
դայեակներ, այլ և մայրեր, մինչև իսկ հայրեր,
որոնք օտար երախաներուն այնչափ երկար փայ-
փայել են, մինչև իրենց հարազատները ասոր
վրայ բարկացեր ու լալ սկսեր են: Ծնողքն ալ
այս բանը տեսնելով կըսեն, տեսէ՛ք տղաս զիս
ի՛նչ քան կը սիրէ:

4. ՔՈՅՐԵՂԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Չնայելով որ սա այնքան բնական ու բնածին
կերեւի, սակայն և այնպէս՝ բազում և շատ ըն-
տանեաց մէջ երախայք կը գտնուին, որք իրա-
բու հետ երբէք չեն կրնար վարուիլ, և որոց
մէջ կուռին վերջ չկայ:

Մենք թէպէտ ստուգիւ այնպիսեաց կար-
գէն չենք, որք Ռուսոյին հետ տղայոց՝ ամէն սը-
խալանքներն ու յանցանքներն ծնողաց և ուսուց-
չաց կը բառնան. սակայն սա ալ անուրանալի է,

ներ, այլ եւ նոցա մասին խօսողներուն վրայ ալ կը
ծիծաղին, սակայն չարաչար կը սխալուին: Այն ջնջին
համարած բաներնին տղայոց մէջ սերմանուելով հետ-
զհետէ կ'աճին ու մեծ մեծ մոլութեանց ու թշուա-
ռութեանց որպէս եւ առաքինութեանց ու երջանկու-
թեանց պատճառ կը լինին: Ինչպէս եւ պզտիկ սերմե-
րէն մեծ մեծ բոյսեր կը յառաջանան: Կ. Թ.

որ նոքա յաճախակի այն չվարմանց պատճառ կը
լինին:

Քոյրեղբայրական կուռները ըստ մեծի մա-
սին իմ և քոյէն կը ծագին: Շատ յաճախ կը
լսուին. “ սա իմն է, չէ՛ իմն է, նա իմ խրձիկն
առաւ և այլն ”: Սեպհականութեան սոյն ետա-
կան տիրութիւնը յառաջ կը բերէ թիւնաւոր
նախանձ: կուռ, հայհոյանք ու ծեծկռտուք:
Միթէ ծնողքն ու մեծերը շատ կամ քիչ յան-
ցաւոր չէ՞ն, երբ տղայոց ինքնասիրութիւնը
վերջապէս այս ատիճան կը ժանտանայ: Տես-
նուած չէ՞ միթէ, թէ ի՞նչպէս իրենք իսկ նա-
խանձ և ընչասիրութիւն կը զարթուցանեն տղա-
յոց մէջ:

Քոյրեղբայրական սիրոյ պզտորման մի ուրիշ
պատճառ յայտնապէս ծնողքն կը լինին, երբ
նոքա տղաներէն մինը կը յարգեն ու կը ներքեն
անոր, իսկ միւսը կ'արհամարհեն, հետն ալ խոր-
տագոյն կը վարուին: Այսպիսով արհամարհ-
ուած տղայի սիրտը կը վշտանայ, և նախանձ ու
ատելութիւն կը ծնուցանէ յարգուած ու պաշտ-
պանուածին դէմ: Սովորաբար պակաս հոգեկան
կամ մարմնական ձիրք ունեցողներն են, որ կ'ար-
համարհուին ծնողներէն, փոխանակ կրկնապատիկ
հաւատարմութեամբ խնամուելու: Ասոր ալ
ընդհակառակն ծնողքն շատ անգամ իրենց գե-
ղեցիկ տղաներուն մինչև անմտութեան աստի-
ճան կը սիրահարին: Այս բանը ո՛չ միայն արհա-
մարհուած, այլ և յարգուած տղաներու վրայ
իսկ խիստ ապականիչ ազդեցութիւն կ'ունի:

2345 600 (11688-57)



— Բնածին քոյրեղբայրական սէր մը ոչ որ կ'ու-
րանայ, թէպէտև ճնողաց ու զաւակաց եղած
սիրոյն չափովը չըլլայ: Բայց դժբաղդաբար այս
ալ ճշմարիտ է, որ տղայք եսականութիւնը հե-
տերնին աշխարհ կը բերեն: Այս պատճառաւ
գաստիարակութեան, այսինքն, գլխաւորապէս
մօր ջանքն ըլլալու է աշխատել՝ դէպի երկպա-
ռակութիւն եղած նոյն վատ հակումն՝ որչափ
կարելի է՝ կանուխ արմատախիւ ընել, և անոր
տեղը քոյրեղբայրական սիրոյ բողբոջը մշակել
ու խնամել: Զէ՞ որ մենք ամենաժիր գործու-
նէութեամբ կ'աշխատինք որ առաջ քաղահան
ընել մեր անուններէն այն աւելորդ և անպիտան
խոտերը՝ յառաջ քան թէ նորա շատնալով և
մեծնալով ազնիւ բուսոց աճման վնասելու կ'ե-
լան: ձիւղ նոյնպէս և մայրն աշխատելու է մաս-
նաւորապէս այն պատճառաւ կանուխկէկ իր
տղաներուն մէջ սէրն ու միաբանութիւնը մշակել
և բնչասիրութիւն ու նախանձն ալ ՚ի բաց կորզել
վասն զի յետոյ թէ՛ սերմանելն ու թէ՛ քաղահան
ընելն ուշանալով օրէ ցօր կը դժուարանայ:

Թող ներուի ինձ ձեր ուշագրութիւնը քա-
նի մը սխալներու վրայ դարձնել, որոնք ասոր
վերաբերմամբ յաճախ տեղի կ'ունենան: Առ-
ջինէկ որդին մինչ երկրորդին ծնունդ գլխաւոր
առարկայ է մայրական ուշագրութեանը: Սա-
կայն երբ նոր մըն ալ աշխարհ կուգայ և բնակա-
նապէս նոյն խնամով կը հոգացուի, այն ժամա-
նակ առջինէկ զինքը կամաց մը լքուած կղգայ:
Ի՞նչպէս պէտք է այն բանի առաջն առնել: Թէ՛

պէտ զաւակ մը ճնած օրէն սկսեալ անշուշտ իւր
մօր գլխաւոր հոգը լինելու է, որդւոյն վերա-
բերեալ ամենափոքրիկ առանձին հանգամանք-
ներն անդամնա կարեւոր համարելու է, և ինչ
որ ինքն անձամբ չի կրնար զաւկին ընել, զայն
գոնէ իրեն աչաց առջեւն ընել տալու է: Սա-
կայն և խիստ ցանկալի է, որ ինքն երախայն ի-
րեն կարեւոր առարկայ մը լինելն՝ կարելի եղածին
չափ քիչ զգայ: Եթէ խնամն ու պահպանու-
թիւնը լռին ու աննկատելի եղածին չափ ալ ան-
վրէպ ու խղճի մտօք ըլլայ, ու մանկիկն ալ ըստ
կարի կանուխ ինքն իրեն թողուի՝ թէ օրօրոցի մէջն
է եղեր և թէ դուրս, և եթէ առ հասարակ ա-
մէն այն պիտոյքնէրը, զորս տղայն արդէն կ'ըզ-
գայ, հնար եղածին չափ պարզացնեն ու անը-
կատելի կերպիւ լեցունեն, այն ժամանակ նա
դժուարաւ կը զրկուի իրեն եղած պահպանու-
թենէն, եթէ օր մը նորածնի մը համար ալ պէտք
ըլլայ հոգ տանել:

Արեւակցի ծնու նոր արդէն եղածներուն հա-
մար ամենամեծ հանդէս ընելու է, նորածինն
ալ տեսնել տալով զանոնք յաճախ ուրախացնե-
լու է: Նաև այն հին և լաւ սովորութիւնը թող-
նելու չէ, որով նորածնի օրօրոցին մէջ ամէն մէկ
տղայի համար ոսկեղօծ թղթի մէջ փաթաթուած
զանազան փոքրիկ պարգեւներ կը դնեն, ու
նոցա անոր մէջ փնտռել ու գտնալ կուտան: Աշ-
խատելու է մկրտութեան ժամանակ զանոնք
առաւելապէս ուրախցնել, որպէս զի այն սուրբ
օրը գեղեցիկ յիշատակ մը ըլլայ:

Երբ հասակաւոր տղան նորածնին պատճառաւ զինքը ոչ երբէք երեսէ հանուած կամ արհամարհուած զգալ կը կարենայ, նա այն ժամանակ ընտանեաց այն նոր բողբոջին մէջը ստուգիւ միայն բերկրութիւն ու երջանկութիւն տեսնայ և փոքրիկ արեւակիցն ալ սրտագին սիրէ պիտի :

Զգուշանալու սխալ մըն ալ այն է, որ հասակաւոր տղայի թեթեւ անզգուշութիւնները, զբօրինակ քիչ մը պինդ սեղմելը, կամ ուրիշ այսպիսի վարմունքներ ծանր կը համարեն, ու կը կարծեն թէ նա մանկան փնասել կամեցած է: Այսպիսի դէպքերում շատ անգամ դայեակների բերնէն կը լսուի ըսել. — անպիտան, չէ որ փոքրիկ քրտնալից ցաւցուցիր —, այն ինչ խեղճ տղան թերեւ ըստ ՚ի սիրոյ քիչ մը սեղմած, կամ դանի ուրախ ցնելու պարզ կարծիքով մը օրօրօցին մէջ խաղալիք մը ձգած է: Այսպիսի բաներ արդարեւ պէտք են արգելուիլ, բայց ոչ անիրաւ բացաւրել: Տղային սկիզբէն ըսելու է, պէտք է որ դու փոքրիկ եղբօրդ կամ քրտնալից հետ խիստ ըզգուշութեամբ վարուիս, և այն սենեկի մէջ, ուր որ մայրն ու մանուկն ՚ի միտին են՝ շփոթ և աղաղակ հանելու չես: Իսկ երբ նա դարձեալ աղաղակ կը հանէ՝ մանկիկը դուրս տանելու է, և ասով անոր զրկանք մը նշմարել տալու է, և ընդհակառակն շնորհ համարել տալու է, երբ նա կը համարձակի մանկան մօտենալ:

Բայց այն ալ կարի փնասակար կըլլայ՝ երբ դայեակ մը, որն որ առաջին տղայէն միտած է,

կրտէ անոր՝ բայց և այնպէս դու միշտ իմ ամենասիրելիս կը մնաս, դու աղէկ ես քան զփոքրիկը: Այսպիսի խօսքեր եթէ ՚ի սիրոյ և ամենալաւ գաղափարով ալ ըլլալու ըլլան, թող տալու չէ որ տեղի ունենան, որովհետեւ այս բանը երկու տղաներու մէջ հակառակութեան գաղափար մը կը դնէ, որը, եթէ կարելի է, նոցա մտքէն երբէք անցնելու չէ:

Արդ՝ երբ տղայք բաւական մեծցած են, այնպէս որ իրարու հետ խաղալ, բայց և վէճի մէջ ալ իյնալ կրնան, այն ժամանակ երբէք մինը միւսի համար պատժելու չէ, այլ միայն խաղաղ ցնելու. քիչ խօսքով երկոքեանը իրարու հետ վարուել պարտաւորոյնելու, և բոտ երեւոյթին հաղիւ նկատելու է թէ՛ վշտացած մասը սրն է, այլ ծանրութիւնը առ հասարակ խռովութեանը վրայ դնելու է: Շատ հեշտ կը պատահի, որ հետազօտութեան մը ժամանակ մէկին կամ միւսին անիրաւութիւն կըլլուի, երբ խռովութեան խիստ փոքրիկ առիթները մեր տեսութեանէն յաճախ կը վրիպին:

Արդ՝ երբ տղաներէն մինը միւսի համար երբէք պատժի չ'ենթարկուիր, այն ժամանակ աւմենէն առաջին արդիւնքն սա կըլլայ, որ մէկին տրուած պատիժը միւսն ալ կը վշտացունէ, մէկ խօսքով ուրախութիւնն ու վիշտն երկուքին հասարակաց կըլլան:

Այսպէս դեռ շատ բաներ կարելի է ըսել այս մասին, ասոնցմէ իւրաքանչիւրը առանձին առանձին թէպէտ աննշան կերեւին, բայց և այնպէս

ամէնքը միատեղ այն կարեւոր նպատակին կը ծառայեն, այն է խաղաղութիւնն և միաբանութիւնն պահել տղայոց մէջ :

Ես տեղեկացած եմ, որ երեքէն մինչ վեց տարեկան հասակը, երբ տղայք կըսկսին աստուածածաշնչէն խօսքեր ուսանել՝ 133 երորդ Սաղմոսի տները (2^ր բարի կամ զի՞ վայելուչ, զի բռնակլին եղբարք ՚ի միասին, անդ պատրաստեաց տէր զօրհնութիւնն և զկեանսն յաւիտենից) Անոնց վրայ ամենէն աւելի կը ներգործէ : Շատ անգամ բաւական կըլլայ սուրբ գրքի այս խօսքերը յիշեցնելով առանց երկար խրատներու զանոնք կռուի մը վրայ անցնել :

Առջի տարիները քոյր եղբարքն ՚ի միասին առակներ ու երգեր կը սորվին մօրմէն, և իրենց սեպհականեալ սենեկին մէջ կը մնան, մինչ ուսումնարանական հասակը : Այս միջոցին մայրական բոլոր ճգունքն, քոյրեղբարքն ՚ի միաբանութիւնն ածելու, միեւնոյնը ըստ ամենայնի լինելու են եղբարց և թէ քերց համար : Եթէ յաջողութի սիրալիր, հաստատամիտ և ուշիմ մօր մը եղբարց ու քերց մէջ, քանի որ նոքա փոքր են, խաղաղութիւնն և սէր հաստատել, այն առտեն այս քաղցր խաղաղութիւնը և գեղեցիկ յարաբերութիւնն մը նաև ապագայում կը շարունակուի նոցա մէջ : Աղջիկը հոգատար սէր մը կուեննայ առ եղբայրն, մանչն ալ շուտով ինքզինք իբր պաշտպան կըզգայ իւր քրոջը :

Մայրական այս ճգունքը պարտ են ընդ վարչութեամբ հօր մը լինել, որոյ ազդեցութիւնը

պէտք է ոգի և զսպանակ լինել ամէն անոնց, ինչ որ ճշմարիտ մայր մը կընէ իւր որդւոց : Եթէ հայրը կարող չէ մէն մի մանր հանդամանքներու ինքնին հետեւիլ, գէթ ամէն բանին ուղղութիւնը ինքն տալու է :

5. ԵՐԿՁՈՏՈՒԹԻՒՆ : ԳԱՐՇԱՆՔ

Շնորքը պէտք է մեծ հոգատարութեամբ զգուշանան, որ իրենց զաւկներուն սարսափ կամ երկիւղ չը պատճառեն : Մէկ այսպիսի հանաքով մը, զորօրինակ մութ տեղ վախցնելով մը, ոչ միայն երկչտութեան պատճառ կընայ ըլլուիլ, որնոր տարիներով տղային մէջը կը մնայ, և յետոյ ալ միայն մեծ աշխատութեամբ կը հեռացուի, այլ և այսպիսի բան մը կընայ նաև մնայուն ջղային թուլութիւն յառաջ բերել :

Անասուններով ալ բնաւ սպառնալու չէ տըղային, պէտք չէ բռնել անոր, ինչպէս որ սովորութիւն է. եթէ այս բանն ընես՝ շունը կուգայ քեզ կը կըծէ, կամ նմանիք : Աղջիկներուն ունեցած այնքան սովորական երկիւղը դէպի սարդիոստայն, թրթուր, մուկն, գորտ և այլն, հոգատար և հասկացող ծնողաց միջոցաւ կարելի է արդէն շատ կանուխ անհետացուիլ, առանց կտորձիկ մըն ալ կանացի քնքշութեանը դպչելու⁽¹⁾ :

(1) Այստեղ խօսքը միայն անվտանգ անասուններու վրայ է : Գարշապն առ օձս զուտ բնական ազդեցութիւն մըն է, եթէ նա թունաւորներն անթոյններէն զանազանելու շափ ալ նուրբ չըլլայ : Շատ դիպուած

Յաւալի է որ կը կարծուի թէ ամէն անախորժ բաներէն վախցող ու սոսկացողները արտաքոյ կարգի քնքուշ զգացման մը տէր ըլլան . կարծիք մը , որ և ծառայող դասուն մէջն անգամ յաւալիս թափանցած է , որ կերեւակայէ թէ մի այսպիսի հիւանդոտ փխրատարտութիւն երեւելի բան մըն է : Կրթուածներու պարտքն է այսպիսի տկարութեանց յաղթութեանը մէջ առջեւէն քալել :

Եթէ մէկը զգացմանց անախորժ բաներէն յառաջ եկած այս վախը առ ոչինչ համարէ , նա պէտք է մտածէ , որ նա իւր հետն ունի նաեւ մի ուրիշ վատթարագոյն բան մըն ալ : Յիշեալ աղջիկներն , որոնք կը յայտնեն թէ իրենք առանց սոսկալու և դողալու չեն կրնար սարգի ոստացն մը շօշափել , մուկ մը տեսնել , սովորաբար կրտսեն նաեւ թէ իրենք չեն կրնար բաց վերքի մը վրայ ալ նայիլ , արիւն առնելու ներկայ գտնուիլ և առ հասարակ , ինչպէս ժողովուրդը կըսէ , « արիւն տեսնել » , այնինչ իւրաքանչիւր ճշմարիտ տանտիկնոջ պարտքն է , պէտք եղած ժամանակ իրենց և թէ դրացեաց տուներու մէջ գթասիրտ քրոջ մը ծառայութիւններ կատարել , և աներկիւղ , խելամոտութեամբ և զգուշութեամբ օգնութիւններ ընել :

ներում ոչ մի բնական գարշանք վտանգաւոր անառուններէն ետ չի կեցնել , ուստի պէտք է տղաներուն զգուշացնել այսպիսիներու , զորօրինակ կատղած չներու հետն իյնալ , զանոնք չարչրկել ու անհանդուատացնել :

6. ԲԱՐԵՒԵԼ , ԽՆԴՐԵԼ , ՇՆՈՐՀԱԿԱԼ ԸԼԿԱԼ ,
ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ

Տղաներուն կարելի եղածին չափ շուտով սորվեցնելու է , որ ամէն անգամ տուն եկողներուն բարեւեն , և ամէն իրենց տրուած բաներու համար ալ շնորհակալ ըլլան , պարտաւորցնելու է նաեւ որ բոլոր այն բաներ , զորս նորա ունենալ կը ցանկան , խնդրանօք ուզեն : Եթէ չպարտաւորցնեն խնդրել ու շնորհակալութիւն մատուցանել , նորա շուտով այն կարծիքին կուգան , թէ ամէն այն բաները , ինչ որ միանգամայն անոնց միտքը կկենայ , կատարուին սխիտ . հրամայողներ են իրենք , որոց հասակաւորները հնազանդելու են : Այս « կը խնդրեմ » և « շնորհակալ եմ » կը պահէ անոնց մէջ այն զգացմունքն , թէ իրենք հասակաւորներէն կախում ունին , որոնք իրենց ի սիրոյ և ոչ ի պարտաւորութենէ բան մը կուտան ու կրնեն : Այս բանը տղաները միեւնոյն ժամանակ Աստուծոյ ալ խնդրելու և շնորհակալ ըլլալու կառաջնորդէ , որնոր անկասկած « օրական հացը կուտայ , նաեւ առանց մեր խնդրանաց » բայց և այնպէս զմեզ խնդրել հրամայեց :

Թէ այս բարեւելուն , խնդրելուն և շնորհակալ ըլլալուն մէջ սովորական քաղաքավարական ձեւերու մեքենական ուսումն մտածուած չէ , ինքնին հասկանալի է : Տղաները պէտք չէ որ օտարներուն զարդարուն քաղաքավարութեամբ մը բարեւեն , այլ այնպէս պարզ , որպէս իրենց ծնողացն ու մերձաւորացն կը բարեւեն :

Պէտք է ընտելացնել փոքր տղայոց նաեւ , երբ նոքա չարաչար կը պօռան , բարկութեամբ բան մը կը նետեն , կամ մի ուրիշ այսպիսի անբարեբաւարութիւն կընեն , ներողութիւն խնդրել , գէթ քանի մը խօսքերով , — զորօրինակ , ալ չեմ ըներ , ներիր ինձ : Չսորվեցուցիր տղայոց կանուխ այսպիսի ներողութիւնը խնդրելու , ալ վերջէն դժուարաւ կը շարժես առ այն , ալ յամառ կամակորութիւն մը կը նուաճէ զանի : Այսպիսի կամակորները նաեւ իրենց բրած չարագործութեանը վրայ կը լռեն , և յամառութեամբ կընդդիմանան զայն խոստովանելու , վասն զի խոստովանութիւնը , որպէս և ներողութիւն խնդրելը զայն կըստորցնէ , կամչցնէ , ընդհակառակն եթէ պատահի որ միանգամ այն տղաները , որոնք արդէն կանուխ ներողութիւն խնդրել սորված են , բնութեան մը մէջ իրենց բրած անիրաւութիւնը լռեն , այն ժամանակ այս լռութիւնը զանոնք խիստ թշուառ կընէ : Դաւթի այն խօսքը թէ՛ «լռեցի ես , և մաշեցան ամենայն ոսկերք իմ» կը գործադրուի անոնց վրայ , գէթ երիտասարդութեան փոքրագոյն չափով : Բայց Դաւթին պէս տղան ալ վերստին ուրախանայ պիտի , երբ զայն խոստովանէ , ու ներողութիւն ստանայ : Ով որ այսպէս իբր տղայ՝ ծնողաց ճըշմարիտ և բացէ ի բաց կը խոստովանի , նա Աստուծոյ առջեւն ալ կը խոստովանի ու խաղաղութիւն կը գտնայ , բայց ով որ ի մանկութենէ սկսեալ խտաւ լռութիւն կը պահէ , որովհետեւ նա սորված չէ անկեղծ խոստովանութեամբ զինքն խոնարհեցնել , նա խաղաղութիւն չպիտի ունենայ :

7. ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ : ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ

Տղայոց մէջ լաւ սովորութիւն մտցնելու նըպատակաւ պէտք չէ զանոնք խաբելով՝ անոնց բրածներէն վատ հետեւութիւններ հանել , կամ այնպիսի գեղեցիկ վարձատրութիւններ խոստանալ , որոնք կատարուելիք չունին և չպիտի ալ կարենան կատարուիլ : Հարիւրաւոր պղտիկ սուտեր կան , որոնցով մարդ կը խաբէ տղաները , և իբր անմեղ բան կը համարէ : Սակայն այս բանը երբէք տեղի ունենալու չէ : Որքան որ կը ներեն տղայոց ուրախանալ առատպէրական նախաճուր երկրին վրայ , և որքան չեն բացատրեր անոնց գեղեցիկ բանաստեղծութիւնները , կամ ուշադրութիւն դարձնել չեն տար . թէ անոնց մէջ որքանը ճշմարիտ է կամ որքանը սուտ , այնքան ալ օրական կեանքին մէջ ճշգրութեամբ պէտք է վարուիլ ճշմարտութեանը հետ : Ինչպէս պիտի կարենայ տղան անպայման և անդրդուելի հաւատարմութիւն ունենալ ծնողաց խօսքերու վրայ , երբ նա մեծնալով նկատէ , թէ սոքա իրեն շատ բաներու մէջ ճշմարտութեանը հակառակ խօսեցած են : Ասով անոր մինչև անգամ Աստուծոյ սուրբ խօսքին վրայ ունեցած հաւատքն չի խախտեր , որովհետեւ նա այս ալ ծնողաց բերնէն սորված է :

Բոլոր բարոյական դաստիարակութեան հաստատուն հիմը ճշմարտութիւնն է : Մայրն՝ եթէ յաջողցունէ սղջկան անկեղծութիւնը այնպէս պահպանել տալ , որ նա իրմէն ոչինչ գաղտնի չպահէ , և որ նա հանգստութիւն չգտնայ , մինչ

չև որ մայրն իւր բոլոր մեծ և թէ փոքր յանձ
ցանքները գիտնայ . այն ատեն նա կրնայ դաս-
տիարակութեան յաջող հետեւանաց մը յու-
սալ : Ես շատ լաւ գիտեմ, որ յաջողութիւնը
այս, ինչպէս և ամէն բանի մէջ Աստուծոյ օրհ-
նութենէն կախումն ունի, բայց ծնողքն Աս-
տուծոյ աշխատակիցներն են, և պարտաւոր են
անկեղծ և անխոնջ ջանքով իրենց բաժին ընկա-
ծըն ընել :

Եթէ պէտք ըլլար քանի մը միջոցներ ցոյց
տալ, որով տղաներ կարենային սուտ խօսելէն
ազատ մնալ, այն ժամանակ ամենէն առաջ ես
այս կը պահանջէի, որ նոքա զմեզ միշտ ճշմա-
րիտ գտնային : Յետոյ կը պահանջէի որ տղան
պատահմամբ պատճառած վնասու մը համար
չպատժուէր, կամ անհոգութեան մը համար,
զոր նա ոչ անհնազանդութեան նկատմամբ ու-
նեցած է, չպատժուէր կըսեմ այսպիսի բանե-
րու համար, եթէ նա պատահածը ամենայն ան-
կեղծութեամբ և զղջալով կը խոստովանէ : Քա-
նի քանի մայրեր իրենց տղաները գաւաթ մը
կամ դիպուածով ապակի մը կ'ոտրելուն, կամ ու-
րիշ այսպիսի ճնշին բաներու համար խստիւ կը
պատժեն : Եթէ ունեցաւ խեղճ տղան այսպիսի
դժբաղդութիւն մը, ալ այնուհետեւ հարուած-
ներու երկիւղէն նա ակամայ ստախոսութեան
մէջ կ'իյնայ, և այժմ իրօք կը մեղանչէ, որի պա-
տասխանատուն անիրաւ մայրը կըլլայ : Իսկ եթէ
մայրը խելամուտութեամբ ներողամտութիւն ցոյց
կուտայ, սակայն տղան բայց և այնպէս իւր

ըրածը կը ծածկէ կամ կուրանայ, այն ատեն
ստութեանը համար նա անպատճառ պատժուե-
լու է : Եթէ կը պատահի որ ՚ի բնէ անկեղծ տը-
ղայ մը անգամ մը կը ստէ, զոր և մայրն ան-
պատճառ պատժելու է, ալ երկրորդ անգա-
մուն, երբ նա իւր սխալը յայտնապէս կը խոս-
տովանի, պէտք չէ անոր կասկած ցոյց տալ,
այլ ընդհակառակն մեծ սէր : Մայրն անոր նը-
կատել տալու է, թէ ինչպէս ինքն առաջ կըս-
կի՞ծ ունեցաւ նորա ստախոսութեանը պատճա-
ռաւ, և թէ ինչպէս այժմ սրտագին ուրախա-
ցած է, որ նա դարձեալ ճշմարտութեան ե-
կած է :

Օր առաջ պէտք է տղաներուն սորվեցնել,
թէ «ստեղծ մարդկանց համար ամօթալի բան է» :
Ստութեան և յայտնի դիտաւորութեամբ ըրած
անհնազանդութեանը համար տղաները պէտք է
ամենէն աւելի պատժուին :

8. ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Բայց որպէս զի յաճախ պատճառ չտրուի
պատժելու, շատ լաւ կըլլայ, որ մայրն աւել-
լորդ հրամաններ չընէ տղային, այլ միայն այն
տեղ, ուր անհրաժեշտ հարկաւոր է : Հայրերը
հաղիւ թէ այս կանոնը պահեն, բայց և մայրեր
ճանչցած եմ, որոնք ամբողջ օր չէին դադար
կանչելիք—մի ըներ, կամ շուտով լրէ՛ այս բանը
—և այսպիսով իսպառ կը տկարանային այն ան-
համար հրամաններուն ու արգելքներուն աղ-
դեցութիւն տալ : Պէտք չէ յառաջագոյն ար-

գիլել, մինչ մարդ վճռած չէ՝ արգիլելիքը ալ երբէք ներելի չընել, և ոչինչ հրամայելու չէ քան զայն, զոր մարդ ընել տալ կը կամի ու կը կարենայ: Այսպէսով մարդ շուտով ուրախու-
թիւն կունենայ հնազանդ ու երջանիկ տղաներ տեսնալու, որովհետեւ չկայ աշխարհիս վրայ աւելի ապերջանիկ ու անբաւական էակ մը, քան անհնազանդ ու անկիրթ տղայ մը:

Մայրերը կը սխալուին նաև անոր մէջ, որ նորա միւսնոյն բանը, զոր աղաչող տղային, շատ անգամ առանց որեւէ պատճառի, կը բացասե-
ին, յետոյ պուստոյղ տղային թշուուութիւն կընեն: Ալ այնուհետեւ ՚ի զուր կըլլայ ըսել ա-
նոր, թէ դուն նախ լռէ, ես զայն յետոյ կու-
տամ քեզ: Պէտք չէ որ տղան այն բանը, որի համար նա պուստոյցած է, ստանայ: Երբ նա եր-
բէք իր ուղածը պուստով ձեռք չբերաւ, և երբ երբէք յետոյ չտրուեցաւ անոր այն, ինչ որ յառաջ մերժուած էր, այն ժամանակ նա ալ չի փորձեր պուստով իւր կամքը կատարել, և մօր «ոչը» ամենայն հեշտութեամբ կընդունուի:

Սակայն այս բանի վրայ պէտք է կանուխ ու-
շադրութիւն դարձնել, քանի որ տղան դեռ քալել կամ խօսել չի կրնար, որովհետեւ ան-
հաւատարի է թէ նա ինչքան շուտ այն ծուռ թշուուութիւնը կը նկատէ, և այն, ինչ որ ա-
նոր անգամ մը թշու տրուած է, ամէն դիպուած-
ներում ի գլուխ հանել կաշխատէ:

Տղայոց լալու և պուստու մասին շատ գան-
գառներ կը լուռին. սակայն, ինչպէս այժմ ցոյց տրուեցաւ, խելացի մայրը կրնայ անոր հակա-
ռակ մեծ ներգործութիւն ունենալ: Օրինակի համար կը տեսնուի սովորաբար, որ տղան խնա-
լու կամ բանի մը զարնուելու ժամանակ աղա-
ղակ կը հանէ: Բայց այս սովորութիւնը յաճախ տղան շրջապատողներու սխալ վարմունքէն յա-
ռաջ կուգայ: Անկարելի է թէպէտ մօրմէն պա-
հանջել, որ երբէք չվախնայ, երբ նա իւր տղա-
յի խնալը կը տեսնայ, բայց ամեներկջոտ մայրն անգամ ինքզինք բռնելու, և այս խնալը տղային իբր աննշան բան մը ներկայացնելու է: Եթէ կա-
րելի է զուարթ ձայնով մը ըսելու է «հայրէ», կամ տէ լաւ, ել վեր: Ներելի չէ երբէք, որ նա, ինչքան ալ որ ցանկայ, տղան գետնէն վեր-
ջընէ, կամ ցաւ ցոյց տայ, մանաւանդ շաբար կամ ուրիշ այսպիսի բան մը տայ զայն մխիթա-
րելու համար: Մայրը երբ կը նկատէ թէ տղան կուզէ սկսիլ լալ, պէտք է անոր ուշադրութիւ-
նը շուտով ուրիշ բանի վրայ դարձունէ, կամ ըսէ. եկ իսկոյն այս կամ այն բանը բերենք, և կամ սենեկի միւս ծայրը կամ դուրս գտնուած
բան մը ցոյց տայ: Այսպիսի բաներով տղան իւր ստացած երկիւղն կը մոռնայ, վասն զի նա խնալով քիչ անգամ ցաւ կ'զգայ, իսկ եթէ իրօք զգայ ալ, այսպիսով նա կը սովորի ցաւ մը լու-
թեամբ կրել:

Ուրիշ դիպուածներ յառաջ բերենք, ուր մայրը՝ առանց տղային նկատել տալու՝ անոր լացի դիմացը կրնայ առնել: Երբ նա, օրինակէ համար, կը նկատէ, որ տղան արդէն ինքնիրեն երկար խաղցած ու սրտնեղելու և խաղէն ձանձրանալու վրայ է, կամ թէ նա վաղվըտելէն կըշտացած ու մարմնով ալ թերեւս ինքզինք յոգնած կ'զգայ, այն ժամանակ մայրը՝ յառաջ քան թէ տաղտկութեան նշանները կերեւան՝ զայն իւր գոգը վերջնելու և անոր բան մը պատմելու կամ երգ մը երգելու է: Կամ թէ նա խաղին մէջը մտնալու և անոր մի նոր ուղղութիւն տալու է: Եթէ տղային վրայ քաղցածութեան թախիծ կերեւնայ և անոր ուտելու կամ խմելու ժամանակն ալ մտեցած, այն ժամանակ, առանց տղային նկատել տալու, կարելի է այս որոշել, պահք քանի մը բոսքէ յառաջել, որպէս զի որ և է լացի տեղի չտրուի:

Պէտք չէ որ փոքր տղաները յառաջ քան զորոշեալ ժամանակն ուտելու և խմելու տեղեր տանին: Ասիկայ սովորաբար իւրաքանչիւր օր տղայոց լալու առիթ կուտայ, որով նոքա մէջ, որպէս ոմանք սխալ կարծիքով մը կըսեն թէ՛ տղան համբերութեան կը վարժի, այլ ընդհակառակն ուտելու և խմելու ազահութեան: Նաև այն, ինչ որ տղան ուտելու է, լիովին պատրաստուած բերելու է անոր առաջ իւր առջին պարագաներով և ոչ շատ տաք, և այնուհետև իսկոյն տալու է: Այսպիսով մարդ ուրախութիւն կուենենայ զուարթ տղայ մը կերակ-

րելու, առանց յառաջագոյն անոր աղաղակը լսած ըլլալու:

Մայրը նշանակելու է այն բաժին, զոր տղան ճաշակէ պիտի: Եթէ դեռ կերակուրը չը վերջացած ձեռք քաշեց նա ուտելէ, այն ժամանակայ պէտք չէ հարկադրել աւելի ուտել: Իսկ եթէ բաժինը վերջացած և տղան կ'աղաղակէ, այն տեղ մայրը զիջանելու չէ աւելի բան բերելու, վասն զի տղան այս կը նկատէ, և շուտով ամէն կերակուրէն յետոյ ձայն կը բարձրացնէ, որպէս զի այլ ևս ստանայ: Եթէ կը համոզուի մայրը, թէ լացը ճշմարիտ պակասութենէ մը յառաջ կուգայ, նա 'ի հարկէ երկրորդ անգամին՝ քիչ մը աւելի պէտք է տայ՝ նախ քան տղան աղաղակել կըսկսէ:

Ասոնք ամէնքն ալ փոքրիկ անվնաս միջոցներ են, որով խելօք մայր մը իւր տղան կրնայ լալէն զերծ պահել՝ առանց անոր հաճոյքը կամ կամակորութիւնը շոյելու և անոնց ծառայելու:

10. ՏՂԱՅՈՑ ՊԱՀՊԱՏՈՒԹԻՒՆԸ: ԽԱՂԸ

Մօր մը համար առաջին կանոններէն է իրեն տղաները անդադար նայիլ ու պահպանել, սակայն այնպէս լռելեայն և աննշմարելի, որ տղան չնկատէ: Տղաները որչափ աւելի գլխաւորաբարկայ են և պիտի լինին ալ մօր մը համար, այնքան ալ պակաս պէտք է որ իրենք իմանան այն: Երբ տղան ինքնիրեն կը խաղայ՝ պէտք է ձեւաչցնել թէ նորա վերայ բոլորովին ուշադրութիւն չը կայ դարձած: Չկայ գեղեցկագոյն բան մը

քան տեսանել տղայ մը , որ բոլորովին ընկղմած է իւր խաղերուն մէջ առանց մտածելու իրեն մօտիկ եղող մարդկանց վրայ , չկայ նաև աւելի անտանելի բան մը քան զայն տղան , որ ամէն ձեռնարկած բաներուն մէջ իւր շուրջը կը նայի , թէ արդեօք կը տեսնան թէ ինքն ի՞նչ գեղեցիկ կը խաղայ , կամ մինչև իսկ կը հարցնէ — ճշմարիտ չէ՞ որ ես լաւ կը խաղամ :

Ընդհանրապէս թողնելու է որ տղան կարելի եղածին չափ ինքնիրեն խաղայ , և պէտք չէ զայն շատ խաղալիքներով շրջապատել , սակայն միշտ այնպիսիներով , որով նա կարենայ իրօք բան մը սկսել : Խաղալիքը ինչքան որ պարզ ըլլայ՝ նա այնքան աւելի ասպարէզ կը բանայ իւր երեւակայութեանը , և այնքան աւելի սիրով կը խաղայ անոր հետ : Ասով ըսել չուզուիր , որ մայրը երբեմն իւր և տղային ուրախութեանը համար անոր հետ պէտք չէ խաղայ , միայն թէ տղան ընտելանալու չէ մտածել՝ թէ իրեն միշտ խաղալու օգնող մը հարկաւոր է :

11. ԱՂԶԿԱՆՑ ՁԲԱՂՄՈՒՆՔԸ

Փոքր աղջկանց համար խրճիկան խաղէն աւելի յարմարագոյն զբաղմունք չկայ : Երբ նոքա իշրենց փոքր հասակում զուարճութիւն կուեննան խրճիկը պահպանելու , օրօրելու , երգելու և այսպէս ամէն այն բաներուն հետեւելու , զոր նոքա կը տեսնեն որ մայրը իրենցմէ պզտիկներուն հետը կընէ , յետոյ ուրախութիւն կըգան խրճիկան զգեստ շինելու : Մայրը պէտք է որ իւր

աղջիկները արթնցնէ այս բանին , վասն զի բոլոր ասոնք ասպարային համար գեղեցիկ նախապատրաստութիւններ են , զոր տղայք չեն նրկատեր : Միայն թէ ես շատ խրճիկներ չէի տար ձեռքը , որովհետեւ լաւագոյն է , որ իւրաքանչիւր աղջիկը միայն մի խրճիկ ունենայ , որն որ անոր այնքան սիրելի կըլլայ , որպէս թէ իր փոքր քոյրն ըլլար :— Խրճիկներու համար փոքր ամաններու մէջ կերակուր եփելն ալ գեղեցիկ զբաղմունք մըն է փոքրերուն համար , և յատուկ ուրախութիւն մը կը պատճառէ նոցա՝ իրենց եղբայրներուն ինքնաեփ կերակուրներով անտեսել : Այն չափազանց ճոխութիւնն ու աւելորդութիւնը , որ այժմ խրճիկներուն և միւս խաղալիքներուն մէջ կը նկատուին , շատ վնասակար կը համարեմ :

Յոյր բաղդի խաղերը քանով , զարով , կամ թղթով իտպառ խտտելի են , ինչպէս և վիճակախաղութիւնը , Եւ ի՞նչ հարկ , քանի որ ասոնցմէ շատ անմեղ խաղեր կան . ամառը՝ գընդակի խաղ , լաստիկ գնդակ , շրջանակարկուց թիւն . ձմեռն ալ , որովհետեւ տղայք այն երջկար իրիկուններ սենեակը կը հաւաքուին , այն պիսի խաղեր պէտք է ընտրուին , որոնց կարենան նաև եղբարք և քոյրք և նոյն իսկ ծնողքն ալ մասնակցիլ ⁽¹⁾ : Այսպիսիք են , զորօրինակ ,

(1) Մերոնք , մանաւանդ այլոց ներկայութեանը , տղայոց հետ խօսելն ու խաղալն երախայական եւ ամօթ կը համարեն : Այս ալ մեծ սխալ մըն է : Ե. Թ.

առականեր, հաներուկներ, հէքաթներ և ըն: Այսպիսի խաղերը ոչ միայն ժամանակ անցնելու, այլ և կրթութեանը կրնան ծառայել: Լաւ նշան է երբ տղայք եռանդով կը մասնակցին անոնց, նոցա ուրախութիւնը արգելքով և մանաւանդ ժանտաբար ընդմիջելու չէ:

12. ԾԱԿԱԶԲՈՒԹԻՒՆ : ՓԱՓԿԱԿԵՐՈՒԹԻՒՆ

Երկու պահատութիւններ, որոնք գրեթէ ամենէն յաճախ կը նկատուին տղայոց վրայ, են ծակաչքութիւն, այսինքն, ամէն անգամ ալ ուրիշներու կերածէն ուղել, որն որ զտղայն վերջի աստիճան տաղտկալի ու խանդարիչ կրնէ իւր շուրջ եղողներուն, և փափկակերութիւն: Այս երկու մոլութեանց առաջն ալ կրնայ նոյնպէս առնուիլ՝ յառաջքան թէ նոքա երեւցած են: Եւ իրօք, երբ տղան կարգն աւերած է, սորվեցընելու է անոր, որ միայն սահմանեալ ժամանակներն ստանայ իրեն համար որոշեալ սնունդն: Այս ժամանակներէն դուրս տղային երբէք ոչինչ տալու չէ, և ոչ դքի ալ, մինչեւ իսկ ամենապատուելի հիւրին անգամ թողնելու չէ նրան ժամանակէ դուրս ուտելու բան տալ: Եթէ մայրըն այս կանոնը ճշգիւ պահպանէ, եթէ դպեակ կամ աղախինն ալ այս մասին նրան հնազանդէ, հայրն ալ, ինչպէս ինքնին հասկանալի է, համաձայն գտնուի ասոր մէջ, այն ժամանակ նա պիտի տեսնայ որ իւր տղան կը նայէ հասակաւորներու կամ ուրիշ տղայոց ուտելու վրայ ա-

ռանց ամենափոքրիկ ցանկութիւն ցոյց տալու, թէ նա անկից բան մը ստանալ կամի:

Տղայ մը եթէ այսպիսի պարզութեան և խիստ կանոնաւորութեան վարժած է, և եթէ անպաման հնազանդութիւնն առ ճնողաց սակաւ բայց անդիմադրելի հրամաններն իրեն երկրորդ բնաւորութիւն եղած է, այն ժամանակ փափկակերութիւնն ալ ոչ դիւրաւ կարթննայ նորա մէջ: Ես կը ճանչնայի այսպէս դաստիարակեալ երեքէն մինչ վեց տարեկան հասակ տղաներ, զորս կարելի էր ժամերով մրգեղինաց ու շաքարեղինացը մէջ թողուլ, առանց անոնցմէ բան մը վերցնել տալու:

Ասով երբէք ըսել չուզուիր, թէ տղայոց մրգեղինաց վրայ ունեցած անմեղ ուրախութիւնը խանդարելու է, ընդհակառակն պարզութեան վարժուած տղաները առողջ ստամոքսով ու քաղցածութեամբ աւելի ուրախութիւն կունենան մրգի վրայ, քան այնպիսիք, որք հանապազօրեայ փափկակերութեամբ խանդարեալ հիւանդոտ որկրամոլութեամբ ու վնասուած ըստամոքսով տկարացած են:

13. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԻՐՈՒԹԻՒՆ

Մարմինը շահելու նկատմամբ Հուֆիզանդը ցոյց տուի, մաքրութեան վերաբերմամբ ալ ես զայն կառաջարկեմ: Մաքրութիւնը տղայոց բողբոջին սովորական ըլլալու է: Պէտք է, մանաւանդ աղջկան մը, անհրաժեշտ կարեւորու-

Թիւն ըլլայ ոչ միայն իւր մարմինը, որպէս և զգետոր միշտ մնաբուր պահել, այլեւ պէտք է որ նա սովոր ըլլայ իւր շուրջը եղած բոլոր անմաքրութիւնը նկատել և հեռացնել, նոյնպէս և բոլոր անկարգութիւնքն ու խառնակութիւնք կարգի բերել: Հագիւ կարելի է հաշիւ տալ թէ ինչպէս ճիշդ ու կատարեալ կարգաւորութիւն մը ժամանակի խնայողութիւն է: Փոքր աղջկանցն ՚ի մանկութենէ սորվեցնելու է քննալու չերթալ՝ նախ քան իրենց խաղալիքները պատկանեալ տեղը դրած չեն, վասն զի ամէն բան, որ չափ ալ որ չնչին ըլլայ, պէտք է որ տանը մէջ իւր սեպհական տեղն ունենայ: Հասակաւոր աղջկանց պարտաւորցնելու է, ոչ միայն այն բաները, որոց հետ նոքա կը դբաղին, ամէն անգամ ժողովել՝ նախ քան մի ուրիշ գործ սկսել այլ և բոլոր միւս բաներն ալ, ինչ որ իրենց յատկացած տեղը չեն տեսներ՝ տեղերնին տանել: Ի հարկէ այս աշխատութիւնը տեղի չունենար, եթէ նոքա և միւս տնեցիք, որպէս այժմ խորհուրդ տուինք, ոչ մի բան անպատշաճ տեղ չդնեն, այլ պատշաճաւոր և իրենց պատկանեալ ու յատկացած տեղերնին դնեն: Սորվեցնելու է նաեւ՝ սենեակէն ելնելու ժամանակ իւր շուրջը նայել թէ արդեօք հետը դուրս տանելու բան մը կայ, և նոյնպէս դուրս եղած ժամանակը՝ թէ արդեօք կայ բան մը հետը ներս տանելու, և ոչ գատարկ ձեռներով ելնել ու մտնել:

Աղջիկ մը, զոր այնպէս կարգաւորութեան և ճշգրութեան վարժեցուցած են, որ սոքա վա-

ղուց արդէն երկրորդ բնաւորութիւն եղած են նորա, որ մը այն կարգամտ կիներէն չըլլար, որոյ անվերջանալի իրարանցումն, և յաճախակի ու սննոյժ տեղաւորումն կարգաւորութիւնը տնեցւոց աւելի զգուելի կրնայ ընել, քան բոլոր անկարգութիւնը: Նոցա կը թուի որ իրենց ձգտման նպատակը ոչ այնքան տան խաղաղ և միշտ կարգաւոր դրութիւնն է, որքան անվերջանալի մաքրելն ու յարգարելն: Ի մանկութենէ խաղաղ ակորժելի և մաքուր կարգապահութեանը վարժած աղջիկ մը առանց շփոթի և առանց մանրակրկտութեան ալ կը կարենայ այս բանին հասնել: Նա ստորագրեալէն երբէք բարձր պահանջմունքներ չի ըներ, ոչ ալ կը բոս կարգապահ կանանց պէս սենեակն աւելու համար որոշուած օրն ու՝ ժամն իսպառ անփոփոխելի կը համարէ, եթէ մինչեւ անգամ տղայի մը հիւանդութիւնը այս փոփոխութիւնը հարկաւոր ընէ, կամ տան հայրը անով կարեւոր զբաղման մը մէջ խանգարուի:

14. ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ: ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

Աղջկանց քաղաքավարութեանը, այսինքն, ազնիւ պարկեշտ վարմանց վրայ ՚ի սկզբանէ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել, ասիկայ կրնայ գլուխ գալ առանց որեւէ դայեկական մանրակրկտութեան և առանց պարուսոյցին օգնութեան: Ի բնէ առողջ և կրթեալ պզտիկ տղաներու շարժումներն սովորաբար վայելուչ կըլլան, մանաւանդ աղջկանց տեսակ մը աղ-

նուութիւնն սովորաբար ընդաբոյս է : Երբ նո-
քա քիչ մը կը մեծնան, այն ժամանակ նոցա մէջ
կարթննայ մի ձգտումն դէպի վայրենութիւն,
և մինչև անգամ դէպի մի տեսակ անհետթիւն-
թիւն : Աղջիկներն այս բաներէն ազատ պահելն
հասկացող մօր գործն է : Սակայն նա երբէք ըսե-
լու չէ, ինչպէս որ սովորութիւն եղած է ըսել-
թող այդ, մարդիկն ինչ կըսեն, կամ, մի ըներ
այդ, եթէ մէյ մը քեզ տեսնելու ըլլայ,
կամ, ուրիշ այսպիսի բաներ : Վիովին կը բաւա-
կանանայ երբոր մայրն ըսէ— մի ըներ այդ, դա
տղեղ է, կամ, ես չեմ ուզեր որ դու այդ բանն
ընես, կամ նաև, հայրդ արգիլած է այդ : Այս
խօսքին ընդդէմ գործելը աղջկան պէտք է սկիզ-
բէն իբր խաղառ անկարելի համարել տալ :

Վայրենի հայրական խաղերը պէտք չէ ներե-
լի ընել աղջկանց տղաներուն հետ, և իրենց մէ-
ջն անգամ : Որքան որ կարելի է սիրով ներելի
ընել անոնց վազել, թռչտել և ամեն տեսակ
զուարթ խաղերը, և սրտագին ալ ուրախանալ
անոնց վրայ, բայց և այնպէս պէտք է որ սոցա
խաղերը միշտ վայելուչ մնան, և պարկեշտու-
թեան ու չափաւորութեան սահմանը երբէք
չանցնեն : Արդէն միանգամ ընտելացած որեւէ
կոշտութիւնն յետոյ թողուլը շատ դժուար կըլ-
լայ, ՚ի հարկէ՝ անուշ և կատարեալ վարուց պար-
զութիւն աւելի այն հասուն աղջկանց քովն կա-
րելի է սպասել, որոնք ամենականուխ մանկու-
թենէն ՚ի վեր ընտելացած են ինքզինքնին ազ-
նիւ ու պարկեշտ պահել, քան թէ անոնց քով,

զորս հասակն առնելէն յետոյ կըստիպեն շատ
ազատ և անզգոյշ վարմունքը թողուլ, և ազնիւ
ու զգոյշն ընդունել : Այսպիսիքն ալ այնուհե-
տեւ միշտ պէտք է մտածեն— ինչպէս կը վար-
ուիմ այժմ, ինչպէս կը կանգնեմ, ինչպէս կը
քալեմ, այն ինչ աղջկան մը ոչինչ աւելի վայել-
չազայն է : քան պարզ, առանց երկիւղալի ինք-
նագիտողութեան և ինքնանկատողութեան ապ-
րիլը, Եթէ ազնիւ քաղաքավարութիւնը անոր
երկրորդ բնաւորութիւնն եղած է, այն ժամա-
նակ նա նորա բարուցը մէջ կերեւնայ՝ թէ իւր
ընտանեաց մէջն է եղեր և թէ ամենամեծ ընկե-
րութեան մը մէջ :

15. ՀԱԳՈՒՍՏԸ

Աղջիկներն ՚ի բնէ միտում մը ունին դէպի
սնտախապաշտութիւն և զարգամբութիւն, այս
միաման դէմ, որպէս և բոլոր մեր բնածին պա-
կասութեանցը դէմ կարելի է սկզբնական և
բարի սովորութեամբ պատերազմել : Այսպէս
աղջկան մը սորվեցնելու է ՚ի մանկութենէ միշտ
մաքուր և կանոնաւոր հագուիլ, բայց ոչ տա-
րօրինակ զարդարուած : Երբէք Պիստակար չըլ-
լար, եթէ նոցա զգացումն դէպի վայելուչ և
ճաշակով հագուստ արթնցնեն, և միևնոյն ժա-
մանակ խորշումն բոլոր անվայել և անճաշակ
զգեստներէ : Փոքր աղջկունքն պէտք է որ պտրղ
և իրենց հասակին յարմար հագնուին : Եար-
թութեան մէջ երբէք պատահելու չէ որ մը, ուր
ներելի ըլլայ, որ տղաք մինչև իսկ միանգամ մի-

այն անկարգ վերագլխով շրջին, այլ պէտք է ամէն օր գրեթէ նոյն տեսակ հագցունել, առանց հագուստի ձեւը յաճախակի փոփոխելու: Սակայն ինքնին հասկանալի է, որ կիւրակէ կիրակնօրեայ զգեստով մը պէտք է որ նշանաւոր ըլլայ, որովհետեւ նա Տիրոջ օրն է:

Այն մեծ կարեւորութիւնը, զոր շատ կնիկներ և աղջկունք հագուստներուն, զարդուց և այսպիսի արտաքին բաներուն կուտան, դիպող ժամուն խօսակցութեանը մէջ՝ ինչպէս որ ճշմարտութիւն է՝ իբր ծիծաղելի բան մը ցոյց տալու է, իբր նշան, թէ որոնք իրենց գլխու վրայ այնքան շատ տեղ ունին չնչին և սնտոի բաներու համար, նոքա մտաւորապէս դատարկ ըլլալու են: Սակայն այնպէս խօսելու չէ, որ աղջկանց խտտագոյն խրատ տալու դիտաւորութիւն մը երեւնայ:

16. ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես կը կամենայի նոյնպէս խորհուրդ տալ, որ այն սովորական զուարճութիւններն, որոց հասակաւոր աղջկունքն սովոր են մասնակցիլ, այնպէս նկատել, որ նոքա կրթեալ և ընտանեկան աղջկան մը ճշմարիտ բերկրութիւն և բաւականութիւն չի կրնար պատճառել: Եթէ ըզգացմունքը դէպի բարձր բաները, դէպի այնպիսի զուարճութիւնք, որոնք իրօք հոգին կաղդուրեն ու կը զուարթացնեն, աչք ու ականջն ալ կուրախացնեն, ի սկզբանէ արթնցած է, այն ժամանակ ցանկութիւն դէպի սովորական և դա-

տարկ ժամնվաճառութիւնը հեշտիւ չարթննար: Եթէ աւելնայ ասոր վրայ նաև այն միտքը, որն որ բրիտոննէաբար դաստիարակուած աղջկան մը շատ մօտ է՝ թէ ամէն սնտոի վաճառուած ժամանակը ո՛չ միայն շահ, այլ ընդհակառակն շատ դիւրաւ վնաս կրնայ պատճառել հոգւոյն, այն ատեն նա առանց ստիպման և առանց համոզման ամէն բան ինչ որ սրտի մաքրութիւնը դիւրաւ խանգարել կարող է, կը մերժէ:

Սակայն պէտք չէ այն զուարճութիւն անուանեալներն իբր մեղք ներկայացնել, վասն զի նոքա այս բանին մէջ խիստ շատերը, զորս իրենք յարգել ու սիրել պարտաւոր են, ուրիշ կարծեաց գտնան պիտի: Մայրը ոչինչ բանի աւելի կարեւորութիւն տալու չէ, քան որ չըլլայ թէ իւր դստերք անձի արժանաւորութիւն համարեն, երբ նոքա այս կամ այն բանը վայելելու չեն մասնակցիլ, և չըլլայ թէ այս պատճառաւ զուրիշները դատապարտեն, և ինքզինքնին առնոց վրայ բարձրացնեն: Վասն զի ամբարտաւանութիւնը շատ աւելի ապականիչ է հոգւոյ, քան սնտոիապաշտութիւնն կամ միտումն առ զուարճութիւնն:

Գտորիկն այս երկու վտանգներուն մէջ տեղէն առաջնորդելու համար ամենամեծ զգուշութիւն պէտք է:

17. ՍՆՈՒՆՐՈՒ ՅԱՐԱՅԵՐՈՒԹԻՒՆՔ

Մայրերէն ոմանք իմ աչքիս հիմնաւոր ծուռ երեւցած կարծիքէն են, իբր թէ աղջիկները

ընտանեկան բոլոր յարաբերութեանցը մէջ, մինչև անգամ սեռերու առ միմեանս վերաբերութեամբ, թափանցել տալ պէտք է, և մուծանել այն բաներուն մէջ, որոնք օր մը հանդիպին պիտի նոցա, եթէ ամուսնանալու ըլլան:

Կան մայրեր ալ, որոնք ընդհակառակն ուրիշ կողմանէ կը չափազանցեն, երբ նոքա այն յարաբերութեանց մասին փոքր աղջկանց այնպիսի բաներ կըսեն, որ նոքա հասակնին առնելուն պէս՝ իբր կատարեալ սուտ տեսնան պիտի ծ Այս բանը ինչպէս բոլոր դէպքերում, նոյնպէս և ասոր մէջ կարելի է: Այսպիսի բաներ սրղայցոյ ներկայութեանը յուզելու չեն, մանաւանդ զաղանօրէն, վասն զի այսպիսով հետաքրքրութիւնը աւելի կը շարժի: Տղայք, որչափ որ կարելի է, այն կարծեաց պէտք է թուղուլ, որ պէս թէ հրեշտակ մըն է, որ մանկիկները մարց կը բերէ: Եթէ տղայք իրօք մօրը ձեռքին տակն են մեծացած՝ այս կէտիս վրայ հաղիւ թէ հեգնական հարցեր ընեն, և ոչ իսկ այն ժամանակներ, երբ մայրն տղայաբերութեամբ մը կարգիլուի զանոնք իւր բոլի առնուլ, ի հարկէ եթէ նոքա այնուհետեւ այնպիսի սեսչութեան մը ներքեւ ըլլային, որ չխորձանէր զայն, ինչ որ մայրն պարկեշտութեամբ և վայելչապէս շինած է:

Եթէ աղջիկներն օր մը հարցնելու ըլլան՝ թէ ինչպէս փոքր տղայոց հետը իրօք կը պաշտահի, պատասխանելու է— Աստուածն է որ մանկիկը մօրը կուտայ, որ և երկինքն իւր պաշ

հապան հրեշտակն ունի, որ հոն անշուշտ անտեսանելի կերպիւ զբաղուած կար, երբ մենք այն մեծ ուրախութեանը դիպեցանք: Սակայն թէ Աստուած ինչպէս կուտայ տղաները, հարկաւոր չէ որ դու իմանաս, և չէիր ալ կրնար հասկանալ: Այս տեսակ պատասխաններով պէտք է որ աղջիկները հարիւրաւոր դիպուածոց մէջ բաւականանան, և մօր ջանքն պիտի ըլլայ դստերը մտքերը այնքան անդադար բարի և գեղեցիկ բաներով զբաղեցնել, որ անոնց ժամանակ չմնայ այսպիսի առարկաները կրկտելու:

Եթէ մայր մը իւր դստերը վրայ ունի բարոյական ազդեցութիւն, զոր լաւ մայր մը պէտք ալ է որ ունենայ, այն ժամանակ բաւական է որ նա միայն մի անգամ լուրջ կերպիւ ըսէ — քեզ համար բնաւ լաւ չէր ըլլար՝ եթէ դու ասանկ բան մը չգիտենայիր, դու պէտք է խորշիս զայն լսելէ —: Չմարիտ դաստիարակուած աղջիկ մը ալ անկէ ետքը ամօթ կըգգայ այսպիսի բաներ խօսել և մտիկ ընել:

Երանի այն աղջկան, որոյ հոգին մինչ իւր աճ մուսնութեան ժամանակ մաքուր տղայի մը հոգի կը մնայ: Նա վերջին տարիները, երբ իւր դատողութիւնը զարգացած է, օրհնէ պիտի իւր մայրը, որն որ ոչ միայն իւր կենցաղավարութեան անարատութեանը վրայ, այլ և իւր մըտածմանց անարատութեանը վրայ հսկած է:

Դեռ ահաս մօր մը համար զիւր տղան ինքն իսկ շահելէն և հոգալէն, զայն միշտ իւր քովը պահելէն աւելի մեծագոյն ուրախութիւնն, և աւելի սիրելի զբաղմունք մը չկայ: Ասով ըսել չուզուիր, թէ նա պէտք է միշտ ինքն միայն զայն կրէ ու պահպանէ, որով հասակաւոր տղաներն անգամ կրնային դիւրաւ բարձի թողի ըլլալ: Ընդհակառակն նա ընկերացնելու է իրեն դեռահաս և, եթէ ոչ փորձուած, դէթ չխանգարուած օրիորդ մը, որին սորվեցնելու է տղան միշտ իւր աչքին առջեւ և օրինաւոր կերպիւ կրել, հետն ալ խելօքութեամբ ու զուարթութեամբ վարուիլ: Մայրն եթէ կը սիրէ զգայեակն, և ուրախութեամբ կը թողու անոր զտրճ զան փայփայելուն մասնակցիլ, այն ժամանակ տղան ալ շուտով միտումն կուհետայ առ դայեակն, և աս ալ իւր կողմէն կը սիրէ զմանկիկն: Այսպիսի սիրալիր վարմամբ դայեակն գողցես գործակատար մը կըլլայ այն ցանկութեանց և մտքերուն, զոր մայրը տղային վերաբերմամբ կը կրէ իւր սրտին մէջ: Բարեկերթ աղջիկ մը շուտով մեծ պատիւ համարէ պիտի իրեն օգնելու, որ սիրելի մանկիկը վնաս մը չկրէ մարմնոյ և թէ հոգւոյ մասին:

Եթէ տան մը տնտեսութիւնը ջնեքեր աւելի քան զմի սպասուհի ունենալ, այն ժամանակ մայրն այնպէս պիտի կարգադրէ, որ սպասուհւոյն մասն աւելի տան ծառայութիւնն խնայ, իսկ մանկան պահպանութիւնն ինքն ընէ: Իւ

մաստուն և շրջահայեաց տիկինը այս հանգամանքներում ալ կրնայ միշտ ժամեր գտնալ, ուր սպասուհին իրեն ներկայութեան տղան պահելու զբօսցնել կարենայ: Ըսի — իւր ներկայութեանը, վասն զի նոյն իսկ լաւագոյն դեռահաս օրիորդներուն անգամ պէտք չէ տղան զբօսնելու ժամանակ դիւրաւ միայն թողուլ, որովհետեւ նոքա իրենց երիտասարդութեանը միջոցին զանազան փորձութեանց ենթակայ են:

Բոլորովին ուրիշ բան է, երբ ստիպողական կըլլայ, որ մայրը տղաներ սպասուհւոյն թողուլ պարտաւորուած է: Այն ժամանակ նա, որովհետեւ կը տեսնայ որ իւր տիկինը տղաներուն հետը միշտ խղճմտութեամբ կը զբաղի, և գիտէ ալ, որ նա երբէք սնտաի ժամավաճառութեան համար զանոնք չթողուր, շատ աւելի զգուշութեամբ կը հոգայ տղաները պահպանելու, քան մի ուրիշ սպասուհի, որուն տղաներ յաճախ և շատ յանձնուած են, երբ մայրն իւր զուարճութեան կը հետեւի:

Եթէ դայեակի երիտասարդութիւնը բայց և այնպէս կասկած կուտայ, պիտի կարողանային արդեօք այս պատճառաւ առարկել թէ մայրն ինչո՞ւ նորա տեղ մի պառաւ և փորձուած դայեակ չի բռներ, որին նա իւր տղաք հանգստութեամբ յանձնել կարող է: Անոր համար չէին կարող, որովհետեւ դայեակի մը սրտաւութեանէն միշտ կարելի չէ սէր առ մանկտիս և վերահայեցողութիւն սպասել, և որովհետեւ այնպիսիք անգամ, որոնք ընդունակ են տղան մարմնոյ մա-

սին հոգալ, մի և նոյն ժամանակ խիստ յաճախ ամենափնասակար ազդեցութիւն կրենն տղայի հոգւոյն վրայ: Այսպիսի պառաւ դայեակ մը չի ալ դիւրաւ թողուր, որ երիտասարդ տիկինը սորվեցնէ իրենն թէ տղան ի՞նչպէս շահելու է, այլ կը կարծէ թէ ինքն շատ աւելի լաւն դիտէ: Բացի այս՝ որովհետեւ նա սովորաբար արդէն ուրիշ ընտանեաց մէջ ծառայած կըլլայ՝ այժմ իւր ծառայութիւնը առաջնոց հետը գատաբըն նաբար համեմատելով՝ տանը օտար կը մնայ: Ի՞նչքան տարբեր կըլլայ դեռահաս աղջիկ մը, որն որ մի և նոյն ընտանեացը հետ միշտ միատեղ կ'ապրի: Տղայոց օթեակը, այգին, ուր նա տղայոցը հետ ապրած, խաղցած, երգած, զուարճացած, ուր նա նոցա հետ ամենագեղեցիկ զբոյցներու (հէքաթներու), պատմութիւններու, և երգերու վրայ ուրախացած է, ննջարանը, ուր նա տղայոց հետ, և տղայոց համար մօրը հետ աղօթած է, բոլոր ասոնք նորան, ինչպէս և մօրը, տղաներուն անգամ վերջին տարիներում իբր ամեներջանիկ յիշատակութիւն պիտի ըլլան:

Տղայոց առ ծառայս ունենալիք յարաբերութեանը գալով պէտք է ըսել որ սորվեցնելու է, որ երբէք ծանր եղանակ կամ խիստ խօսք մը չը գործածեն ծառաներուն դէմ, մանաւանդ թէ Հրամայեն, այլ միայն խնդրեն: Ի հարկէ՝ շատ անգամ իրենք ծննդքն պատճառ կը լինին, որ տղայք ծառաներուն հետը մարդավարի չեն վարուիր, երբ նոքա տղայոցը ներկայութեան

խտտագին պախարականօք նոցա վրայ կը յարձակուին: Տղաներն այս բանը շատ լաւ կը նկատեն և կը հետեւին անոր: — Եթէ կը համոզուիս, որ սպասուորն անպէտ է, պէտք է որ զայն կարելի եղածին չափ շուտով հեռացնել, ապա թէ ոչ պարտաւոր կը մնաս դատերցդ, որոնք նորա հետ յաճախ գործ կուենան:

19. ՏՂԱՅՈՑ ՏՕՆԻ ՕՐԵՐԸ

Բոլորովին երկրային մտածողներուն քովը շատ անգամ այն կարծիքը կը գտնուի թէ՛ այն ընտանեացը մէջ, որք քրիստոնէական և աւելի առանձնական կեանք կը վարեն, մեղամաղձօտութիւն, և դէպի բոլոր ուրախութիւնքն արհամարհանք ու զզրանք կը տիրէ: Այս ջերմեռանդները, կըսեն նոքա, ամէն ուրախութեանց մէջ մեղանջու մն կը տեսնան, իրենց տղաները երկրային զուարճութիւններէն բռնի ետ կը պահեն, սակայն նոքա այսպիսով կրկնապատիկ կը գրդուին, որովհետեւ կ'արդելուին: Անոնք որ այսպէս կը խօսին չեն գիտեր Առաքելայն ըսածը թէ— Ուրախ լերուք ՚ի տէր յամենայն ժամ, դարձեալ ասեմ ուրախ լերուք— խօսք մը, որն որ նոցա քրիստոնէական ընտանեկան կենաց վրայ ունեցած կարծեացը բոլորովին կը հակառակէ: Եթէ գիտենան ալ նոքա առաքելայն այն քաղցր ակնարկը առ ուրախութիւնը, բայց և այնպէս այնքան երկար ժամանակ սխալ պիտի հասկնան « Ի Տէր » բառը՝ մինչ

երկրային անհանգիստ ուրախութեան արբեցութեանէն սթափեալ՝ «ի Տէր ուրախութեանը» մէջ խսկապէս սպրին ։

Սակայն խօսքը այս տեղ հասակաւորներու փորձութեամբ լի զուարճութեանց վրայ չէ, այլ տղայոց անմեղ գեղեցիկ տօն աւուրց և նոցա հանդէսներու վրայ ։ Բնական է որ մայրերը հօրերէն շատ աւելի կը մտածեն թէ ինչպէս այս հանդէսներն կարգադրուելու են, որ տղայք նոցա վրայ մի ճշմարիտ սրտի ուրախութիւն ունենան ։

Որչափ ալ որ ես կլաուդիուսին իրաւունք կուտամ, թէ պէտք է տարուանը մէջ տղայոց շատ մը տօնի օրեր ընել, բայց հարկաւոր է անպատճառ, որ եկեղեցական այն երեք մեծ տօները իբր տարուան գլխաւոր փայլուն կէտերը յայտնապէս գերազանցեն, և երբէք միւս տօներու կարգին մէջ կեցած չերեւնան տղայոց ։

Ի սկզբանէ անտի այն երեք տօներէն Սուրբ Մինդեան տօնը մասնաւորապէս իբր տղայոց տօն մը տօնուած է ։ (1) Սրդէն վերջի աշունքէն սկսեալ մինչ Ս. Մնուհդը փոքր տղաներուն

(1) Թէպէտ Ս. Մնուհեան տօնը մեր մէջ Գերմանացւոց տօնածին պէս չի տօնուիր, որ տղայոց տօն կարենանք համարել ևւ ոչ իսկ կրնանք նոցա այս մասին ունեցած սովորութիւնները մեր Ս. Մնուհեանը յարմարցնել, բայց եւ այնպէս այս գլուխը թարգմանեցի, որ մեր ժողովուրդը թերեւս նոցա սկզբունքներէն օգուտ քաղէ ։

անգամ պէտք է Մնուհեան մանրիկ ընծաներ (1) շինել տալ իրենց ծնողաց, եղբարց ևւ. ևս և աղքատ տղայոց համար. (փասս կայ եթէ շինուածքնին կատարեալ բան մը չըլլայ) ։ Պարան պելու ժամանակ երբեմն ծնուհեան վերաբերեալ երգեր երգելու են ։ Տօնը, որի վրայօք արշափէն երկար ժանակ կը խօսուի, կ'երգուի, և որի համար կաշխատուի, քանի որ մօտենայ՝ տղայոց զուարթ սպասումն այնքան աւելի կ'աճի, և այնքան՝ դիւրագոյն կը յաջողի նորան վերաբերեալ աւածներ ու ոտանաւորներ սորվեցնել անոնց, և այսպիսով Քրիստոսի Մնուհեան հոգեւոր օրհնութիւնը մօտեցնել ։

Ընծաները շատ զանազան ըլլալու են, նայելով թէ ընծան տուող ու աւնողներն ծեր են թէ մանուկ, հարուստ թէ աղքատ, այս թէ այն կը սիրեն և թէ ինչ բանի պակասութիւն ունին և այլն ։ Ոչինչ աւելորդ, ոչինչ շոյլ բան ընծայուելու չէ, որն որ ընծայողի նիւթական կարողութեանէն վեր է ։ Սակայն բոլորովին հակառակ կողմն ալ ինչալու չէ՝ տղայոց միայն այնպիսի բաներ ընծայելով, որոնք նոցա անհրաժեշտ պէտք են, զորօրինակ ամենակարեւոր ազանելի զգեստներ, կօշիկ գուլպայ և այլն ։ Վասնզի այսպիսի բաներ պէտք էին արդէն հոգացուիլ, եթէ ծնուհեան տօն ալ չկատարուէր և եթէ կուպաշտ կամ մահմետական ալ ըլլային ։

(1) Գերմանիոյ մէջ սովորութիւն կայ Ս. Մնուհեան տօնին իրարու ընծաներ ընել ։

Այլ ընծայելու է գրքեր և սրահներն, որոնք տղայոց մասնաւորապէս սիրելի են, շինութեան արկղ ⁽¹⁾ մը և այլն : Քրիստոսի գեղեցիկ ծառը շաքարավաճառի խանութ ըլլալու չէ, այլ երեւակայական, գրախտային ոսկեղօծեալ խնձորներով և ընկղզներով, աստղերով և շուշաններով արմատին քովը մարդագետին լճակով հանդերձ, որին մէջ կարասներ և ոսկեձկուներ, արմատին մերձ խրճիթը, որին մէջ Յովսէփ, Մարիամ և Մանուկն Յիսուս, որոյ հովիւքն կամ արեւելեան իմաստունքն կերկրպագեն, խրճըթի վրան ալ կը փայլի աստղն :

Այս ամենը տղայոց գեղեցիկ երազ մըն է, որն որ ամենօրեայ կեանքէն բոլորովին կը տարբերի : Այսպէս երազելով կը քնանան նոքա և կարթնանան ծննդեան առաւօտը՝ մի նոր ուրախութիւն ունենալով գեղեցիկ և օրհնեալ տունին վրայ :

Ծննդեան զուարթ ժամանակին բոլորովին հակառակն, չարչարանաց ժամանակն է : Եւ այս սուրբ գիշերային ժամանակին ալ կը հետեւի Քրիստոսի յարութեան լուսաւոր Չատկի առաւօտը :

Չատկին ընծայելու է տղայոց շինծու գառ-

⁽¹⁾ Եւրոպիոյ մէջ տղայոց համար փոքր փոքր տան համար փայտէ աղիւսներ, գերաններ եւ առ հասարակ շինութեան վերաբերեալ ամէն բաներ շինուած պատրաստի արկղիկներու մէջ զետեղուած կը ծախուին՝ առ ի զբաղումն նոցա, որպէս մանկավարժները կրթական մեծ նշանակութիւն կուտան :

նուկներ, զորս փոքրերը իրենց տղայական հարուստ երեւակայութեամբն կը կենդանացնեն և կը փայփայեն ու կը դարմանեն, իբր թէ իրական գառ ըլլար : Եթէ տղայք քիչ մը մեծ են, նոցա նաեւ Չատկի հաւկիթ պահեն խաղ մըն է, որի վրայ նոքա շատ առաջուց կ'ուրախանան ⁽¹⁾ :

Եթէ այն լուին ժամանակը, որն որ Չատկէն կ'առաջէ, ընտանեացը մէջ իրօք իբր լուին և զուսպ ժամանակ մը անցուցուի, այն ատեն տղայքն արդէն կանուխ կըստանան ցաւոյ և ուրախութեան այն անշիջանելի հակառակներդործութիւնը եկեղեցւոյ կենացը մէջ, առանց շատ մը բառական մեկնութեամբ բացատրուած ըլլալու : Արդէն սօնի աւետարանը և Չատկի զուարթ երգերը մանկանց սրտերը բերկրութեամբ կը լեցունեն, եթէ ասոնց վրայ աւելցուին, ինչպէս ծննդեան, նաեւ տղայական անմեղ ուրախութիւնը, այն ատեն Չատկի տունը նոցա համար փառաւոր ուրախութեան տօն մը կըլլայ, որոյ խորին նշանակութիւնը նոցա նոյնպէս տարուէ տարի աւելի կը պարզուի, որպէս և նախընթաց չարչարանաց լուին ժամանակի լուրջ մտածմունքը :

Հոգեգալստեան ⁽²⁾ եկեղեցւոյ գարնանա-

⁽¹⁾ Գերմանիայում սովորութիւն կայ, որ Չատկին ծերը հաւկիթ կը պահեն, եւ փոքրերուն ալ զնտուել ու գտնալ կուտան :

⁽²⁾ Հայոց մէջ Համբարձման տօնը աւելի զուարթ կը կատարուի :

յին այս տօնին մայրը տղայոց անկողիններու
 գլխին, դեռ նորա չարթնցած, ծառի ճիւղեր
 կը կանգնեցնէ, որոյ վրայ ալ ծաղիկներ և տղային
 սիրելի բաներ կը կախէ: Խորին ծերերն անգամ,
 որոց համար ալ երբեմն հոգեգալստեան առաւօժ
 տը նոյնպէս զարդարուած է եղեր, կրնան դեռ
 այն գեղեցիկ զգացման մասին պատմել, որով
 նորա հոգեգալստեան երեկոյին կը քնանային, և
 որով միւս առաւօտն ալ արթնալով կանանչ
 ճիւղերուն կը նայէին:

Կեանքի վերջին տարիներումը այս երեք
 մեծ տօները, որչափ որ յիշողութիւնը մեր
 մանկութեան օրերուն կրնայ հասնիլ, իբրեւ
 մանկութեան երջանիկ, խորհրդաւոր և սուրբ
 օրեր մեր հոգւոյն առջեւ կը կենայ:

Ո՛վ կրնար բոլոր այն գեղեցիկ հանդէսները
 մի առ մի յառաջ բերել, որոնք Գերմանական
 շատ երկիրներու մէջ տղաներէն կամ ամբողջ
 ժողովրդենէն կը տօնուին: Այսպէս Յովհաննու
 տօնը, ուր տղաներ օր մը առաջ ծաղիկներ
 ժողուելով պսակներ կը շինեն կը կախեն դռ-
 ներու վրայ: Նաեւ փոքրիկ տղայոց թեւերու
 վրայ ծաղիկ փունջեր կապելով եկեղեցի կը տա-
 նին: Շատ կողմերն ալ բարձր տեղեր Յովհաննու
 կրակը կը վառեն: Այսպէս և մայիսի հանդէսի,
 ուր տղայք երգելով ձմեռը կարտաքսեն: Այս-
 պէս և գարնան հանդիսաւոր թափօրներ, ուր
 ծեր և տղայ՝ քահանայն առջեւէն ամբողջ դաշ-
 տի բալորտիքը պտրտելով Աստուծոյ օրհնութիւ-
 նը կը խնդրեն, որին նորա աշնան ալ շնորհակալ

կըլլան: Ո՛վ որ գիւղում մեծցած է՝ նա անշուշտ
 քաղցրութեամբ կը յիշէ այս ուրախութեան օ-
 րերը:

Հայրենեաց տօներու հանդէսը մեզ համար
 սուրբ ըլլալու է և սուրբ մնալու: Ամենէն ա-
 ռաջ Աէյպցիկի ճակատամարտի յիշատակը Գեր-
 մանացի ընտանեացը մէջ միշտ ու միշտ կենդանի
 պահելու է ⁽¹⁾: Հոկտեմբեր 18 ին այն փառաւոր
 աւուր նկարագրութիւնը կարդացուելու է, հայ-
 րենասիրական երգեր երգուելու, և տղայք ու
 տղաներու տղաներն ալ Աստուծոյ շնորհակալ
 ըլլալու են այն ծանր գերութենէն փրկուել-
 նուն համար, մեր ժողովրդեան ազատուած կե-
 նացը համար:

Տղայոց ծննդեան տարեդարձի հանդէսը ի-
 րենց համար խիստ ուրախառիթ է ⁽²⁾: Այս-
 քան ետսկանութիւն արդէն պէտք է նոցա նե-
 րելի ընենք, որ իւրաքանչիւր տղայի ծննդեան

⁽¹⁾ Այս այն ճակատամարտն է, ուր Գերմանացիք
 Աւստրիացւոց եւ Ռուսաց հետ միանալով Ֆրանսիական
 զօրութիւնը խորտակեցին, եւ վերջապէս Նապոլէօն ա-
 ռաջիկի գերութեան լուծէն իսպառ ազատուեցան:

Մեր Հայաստան, Հայրենեաց աղգային տօներուն
 մէջ ասոր համապատասխանողն է Վարդանանց ճակա-
 տամարտն, որ ՚ի դաշտն Շաւարշան ընդդէմ Պարսից:

Ի. Թ.

⁽²⁾ Մեր մէջ Ծննդեան տարեդարձը տօնելու սովո-
 րութիւն չկայ, ուստի ասոր տեղ անուան տօնախմբու-
 թիւնը պիտի բռնէ:

Ի. Թ.

տօնը մասնաւորապէս կատարուի, և որովհետեւ տեւ նա հանդիսին թագաւորն է, պէտք է իւրեն գեղեցիկ ընծաներ արուին, և որովհետեւ իւր սիրելի կերակուրները կը պատուիրէ՝ կարող է և իւր ամենասիրելի բարեկամներն և բարեկամուհիքն հրաւիրել: Սակայն այս հանդէսը տղային համար ամենէն աւելի շնորհակարութեան հանդէս ըլլալու է անցեալ տարւոյ երջանկութեանը համար, միևնոյն ժամանակ հանդէս ազգանաց, որ Աստուած հետեւեալ տարին ալ օրհնէ:

Այս բոլորէս տղայոց ետականութիւնը փոքր ինչ պաշտպանութեան առի: Բայց քանի՛ ևս ուրախառիթ կը լինի՝ երբ տղայք ճնողաց տօնին վրայ ալ այնպէս սրտագին ուրախանան, ինչպէս իրենց սեպհականին վրայ, և շքաթիւներ առաջ մտածեն թէ ինչո՞վ զանոնք ուրախացնեն և ի՞նչ կրնան նոցա ընծայել:

Սակայն ինձ պէտք է վերջացնել, միայն այսչափս ալ յաւելլով թէ չըլլայ որ տղայոց հանդէսներն առ ոչինչ համարուին, վասն զի նոքա ընտանեկան կեանքի զուարթ իայլակէտներն են:

Վ Ե Ր Զ Ա Յ Ա Ն

Սիրելի ընթերցող, եթէ ուշադրութեամբ կարդացիր սոյն գրքս, անտարակոյս և հասկցար զայն: Բայց միայն հասկնալովդ ոչ սորա հեղինակ ու թարգմանիչն իրենց նպատակին կը հասնին, և ոչ իսկ դու օգուտ մը քաղած կը լինիս, եթէ նորա բովանդակած վարդապետութիւնքն անթերի գործադրութեամբ ալ չ'կենդանացնես: Սակայն այս ալ բաւական չէ, աղջկան դատտիրակութիւնը ասով չի վերջանար, վասն զի յիշեալ վարդապետութիւնքն աղջկան մինչ վարժարանական հասակը կ'առաջնորդեն, անդին դեռ նորա առաջ ուսման, տնական կառավարութեան, և մայրութեան ընդարձակ ասպարէզներ կը մնան, որոյ մէջ նոյնպէս հոգատար և իմաստուն առաջնորդութեան պէտք են, զոր մեր ներկայ աշխատութիւնը չընէր, ուստի աւելի հեռուն առաջնորդել կրցողները թող յառաջ մատչին:

ԹԱՐԳՄԱՆԻԶՆ



1890

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

1890

56

10.7.

43

հունիս 1998
20

2073

<< Ազգային գրադարան >>
2073

NL0051297

